

ՅԱՇԱՆ ԸՆԴԴԵՄ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԳՈՐԾԸ

CASE OF YASA v. TURKEY

Գատարանի 1998թ. սեպտեմբերի 2-ի

Վճիռը

ՓԱՍՏԵՐԸ

1. Գործի հանգամանքները

6. Պրն Էշրեֆ Յաշան Թուրքիայի քաղաքացի է, ծնված 1962 թ. և այժմ բնակվում է Դիարբեքիրում: Նրա հորեղբայրը՝ պրն - չաշիմ Յաշան, ծնված 1956 թ. նույնպես ապրել է Դիարբեքիրում: Նա սպանվել է 1993 թ. հունիսի 14-ին:

7. Դիմողը դիմում է ներկայացրել Հանձնաժողով «իր և իր հանգուցյալ հորեղբոր անունից» (տես կետ 56), որով նա բողոքում է, որ իրենք եղել են զինված հարձակման զոհեր, որովհետև նրանք զբաղվում էին Ozgur Gundem թերթի վաճառքով: Այդ հարձակումները եղել են այդ և այլ քրդամետ թերթերի նկատմամբ ծավալված արշավի մի մասը, որն ընթանում էր պետության թողտվության և նույնիսկ ուղղակի մասնակցության պայմաններում:

Որոշ իրադարձություններ, որոնք հիմք են հանդիսացել սույն գանգատը ներկայացնելու համար, վիճահարույց են:

A. Փաստերի վերաբերյալ դիմողի և Կառավարության վարկածները

1. Դիմողի վարկածը

(a) Դիմողի և նրա հորեղբոր հետ կապված իրադարձությունները

8. Դիմողը Դիարբեքիր քաղաքում որոշ ժամանակով վարձակալել է թերթերի կրպակ, որը հայտնի է եղել Bulvar Buffet անունով: 1992թ. հոկտեմբերից սկսած նա ոստիկանության կողմից ստացել է մահվան սպառնալիքներ, քանի որ վաճառում էր որոշակի թերթեր, մասնավորապես՝ քրդամետ Ozgur Gundem թերթը:

9. 1992թ. նոյեմբերի 15-ի առավոտյան ժամերին դիմողի կրպակը հրդեհվել է և ավերվել: Դիմող իրեն հասցված վնասը գնահատել է 70,000,000 թուրքական լիրայի չափով:

10. Այդ դեպքից մոտ մեկ շաբաթ առաջ դիմողին այցելել էին երկու ոստիկանական պաշտոնյա, որոնցից մեկը եղել էր Դիարբեքիրի Անվտանգության բաժանմունքի վերահսկիչ Քեմալ Ֆիդանը: Դիմողը չի իմացել մյուս պաշտոնյայի անունը: Նրանք

սպառնացել են այրել կրպակը, իր վաճառած թերթերի պատճառով:

11. Դիմողի կրպակի հրդեհվելուց հետո մյուս լրագրավաճառները որոշել են անցկացնել մեկօրյա բողոքի գործադուլ, և ոչինչ չեն վաճառել:

12. 1993թ. հունվարի 15-ին առավոտյան ժամը 7.15-ի սահմաններում դիմողի վրա կրակոցներ են արձակվել, երբ նա գտնվել է Դիարբեքիրի Մարդիակապի շրջանի Տուրիստիկ փողոցում: Նա իր հեծանվով գնում էր տնից դեպի կրպակ՝ իր որդի Դիրենին հեծանվի հետնամասում նստեցրած, երբ նկատել է կասկածելի տեսք ունեցող երկու անձանց, մեկը՝ բարձրահասակ, մյուսը՝ միջին հասակի, մոտ 20-25 տարեկան: Վախենալով, որ նրանց մտադրությունները թշնամական են, դիմողը փորձել է հեռու վարել հեծանիվը, բայց նրան հարվածել է տաքսին: Նա և իր որդին վայր են ընկել: Այդ պահին այդ երկու անձինք սկսել են կրակել նրանց վրա: Ինքնապաշտպանության նպատակով դիմողը գոտկատեղից հանել է ատրճանակը և վեց կրակոց է արձակել հետ, այդ կրակոցներից արձակված ոչ մի գնդակ չի դիպել այդ երկու անձանց: Սակայն դիմողի վրա հարձակվողների կողմից արձակվել է ութ գնդակ, որոնցից երեքը քերծել են նրա հետևի մասը, մեկը՝ աջ ոտքը: Գնդակներից մեկը խոցել է նրա ձախ թևը, մյուսը՝ ձախ դաստակը, մեկ գնդակ մխրճվել է նրա ձախ ձեռքի ցուցամատի և միջնամատի արանքը, մի գնդակն էլ նրա աջ նստատեղի միջով անցնելով՝ մխրճվել է որովայնի մեջ:

13. Դիմողին տաքսիով հասցրել են Դիարբեքիրի հիվանդանոց: Նա խնդրել է վարորդին իր ատրճանակը հանձնել իր ազգականներից մեկին: Վարորդն իր հերթին այն տվել է մեկ այլ տաքսու վարորդի, որն իմացել է դիմողի կրպակի գտնվելու վայրը: Նա դրել է ատրճանակը կրպակի հաշվիչի տակ գտնվող մետաղյա արկղում:

14. Դիմողի մարմնից գնդակները հանելու վիրահատական պրոցեսը, որը կատարվում էր Դիարբեքիրի հիվանդանոցի ինտենսիվ բուժման բաժանմունքում, ոստիկանության կողմից երկու ժամով ուշացվել է: Նրա հարազատները հետագայում հիվանդանոցում ենթարկվել են վիրավորանքների և ստացել են մահվան սպառնալիքներ:

15. Դիմողը հիվանդանոցում անցկացրել է տասնմեկ օր: Որպես այդ հարձակման հետևանք նա մինչև այժմ ունի առողջության հետ կապված խնդիրներ: Նա տառապում է ձախ թևի և ձախ ձեռքի որոշ մատների ցավից և անընդհատ անհարմարության զգացում է ունենում սպիների պատճառով: Բացի դրանից,

նա ունի ստամոքսի ցավեր, որոնք վիրահատությունից հետո առաջացած վարակման արդյունք են:

16. Հիվանդանոցում դիմողը հայտարարություն է արել ուստիկանոթյանը, որում նա նշել է, որ իր վրա հարձակվողները եղել են ուստիկանոթյան պաշտոնյաներ: Որևէ փուլում դատախազությունը նրան չի խնդրել հարձակման մասին հայտարարություն անել:

17. Հոսպիտալից դուրս գալուց հետո նա մեղադրվել է ապօրինի զենք կրելու մեջ: 1993թ. մայիսի 24-ին նա դատապարտվել է մեկ տարվա քանտարկության: Հետագայում այդ պատժամիջոցը դատարանի կողմից փոխարինվել է 1,633,333 թուրքական լիրայի չափով տուգանքի, որը պետք է վճարվեր չորս ամսվա ընթացքում: Դատավճռի և նշանակված պատժի դեմ նրա բերած բողոքները մերժվել են:

18. 1993թ. հունիսի 14-ին առավոտյան ժամը 7.30-ի սահմաններում դիմողի հորեղբայր Հաշիմ Յաշան, որն աշխատեցնում էր դիմողի կրպակը 1993թ. մարտից, Դիարբեքիրի Մանուայ փողոցով քայլելիս անհայտ անձի կողմից գլխին արձակված գնդակով սպանվել է: Հաշիմ Յաշայի յոթնամյա որդի Ազիզն այդ սպանության միակ վկան է եղել: Նույն օրը դիմողը ձերբակալվել է, ոտնձգության և մահվան սպառնալիքների է ենթարկվել ուստիկանոթյան կողմից, որոնք նրան ասել են, որ իրենք են իրականացրել այդ կրակոցները, և որ ցանկալի թիրախը եղել է ինքը:

19. 1993թ. հոկտեմբերի 10-ին դիմողի կրտսեր եղբայրը՝ տասներեքամյա Յալչին Յաշան, որը աշխատեցնում էր կրպակը դիմողի և նրա հորեղբոր վրա կատարված հարձակումներից հետո, իր տան մոտ սպանվել է անհայտ հարձակվողի կողմից: Դիմողի մյուս եղբայրը՝ տասնվեցամյա Յահյա Յաշան, ծանր վիրավորվել է հարձակման ժամանակ:

20. Այդ հարձակումից հետո դիմողն ստիպված էր վաճառել իր կրպակը, քանի որ իր ընտանիքում կրպակն աշխատեցնելու համար այլևս մարդ չէր մնացել:

(b) Քրդամետ թերթեր տարածող անձանց նկատմամբ հարձակումների արշավը

21. Դիմողը հայտարարել է, որ ինքը և իր հորեղբայրը հարձակման են ենթարկվել, որովհետև ներգրավված են եղել Ozgur Gundem թերթի առաքման գործում: Դեպքերը եղել են այդ և այլ քրդամետ թերթերի հրատարակման և առաքման գործում ներգրավված անձանց նկատմամբ իրականացվող հալածանքների

և հարձակումների արշավի մի մասը: Այդ հայտարարությունը հիմնավորելու համար դիմողը վկայակոչել է հետևյալ դեպքերը:

(1) Ozgur Gundem-ի փակումը

22. Ozgur Gundem-ի հրատարակումը դադարեցվել է 1994թ. ապրիլին, որը եղել է պետության կողմից այդ թերթին ներկայացված մեղադրանքների ալիքի արդյունք: Հրատարակվելու պահից ի վեր, առաջին անգամ 1992թ. մայիսին, թերթը ենթարկվել է մի շարք մեղադրանքների, բռնագրավման հրամանների, ժամանակավորապես փակման հրամանների: Թեև թերթի վաճառքը երբեք պաշտոնապես չէր արգելվել, բայց ժամանակներ են եղել, որ բռնագրավման և փակման հրամանները խոչընդոտել են դրա հրատարակմանը և առաքմանը: Ozgur Ulke-ն՝ Ozgur Gundem-ի իրավահաջորդը, հարկադրաբար փակվել է 1995թ. փետրվարին, իսկ դրան փոխարինած Yeni Politika-ի հրատարակումը դադարեցվել է 1995թ. օգոստոսին:

(2) Ոտնձգություններ Ozgur Gundem-ի անձնակազմի նկատմամբ

23. Դիմողը տրամադրել է ցուցակներ, որոնք պարունակում էին մանրամասներ Ozgur Gundem-ի և նմանատիպ թերթերի անձնակազմի և առաքիչների նկատմամբ իրականացված հարձակումների, վատ վերաբերմունքի, կալանքի սպառնալիքների մասին, որոնք եղել են 1992թ., 1993թ. և 1994թ. սկզբներին: Նա պնդել է, որ այդ դեպքերը հստակորեն հաստատում են, որ կային Ozgur Gundem-ի մի շարք աշխատակիցներ, որոնք թիրախ էին հանդիսանում:

24. Դիմողը նշել է, որ առնվազն յոթ լրագրողներ ներառյալ՝ Մուսա Անթերը, որոնք աշխատում էին Ozgur Gundem-ի համար, սպանվել են, իսկ մյուսները վիրավորվել են հարձակումների ժամանակ: Բազմաթիվ այլ լրագրողներ կալանավորվել են և որոշ ատյաններում ենթարկվել վատ վերաբերմունքի:

25. Եղել են բազմաթիվ մեղադրանքներ Ozgur Gundem-ի սեփականատերերի, հրատարակիչների, լրագրողների նկատմամբ՝ «Ահաբեկչության կանխարգելման մասին» ակտի այն դրույթի հիման վրա, որը արգելում է պետության անբաժանելի ամբողջականության դեմ տարվող քարոզչությունը: Բացի դրանից, սպանվել է Բեհչեթ Սանթյուրքը՝ Ozgur Gundem-ի հիմնական ֆինանսավորողներից մեկը (տես՝ կետ 46):

26. Դիմողը նշել է, որ թերթերի որոշ կրպակներ ենթարկվել են հարձակումների Ozgur Gundem-ը վաճառելու համար: Բացի

դրանից, 1994թ. դեկտեմբերի 4-ին Ozgur Gundem-ի՝ Ստամբուլում գտնվող կենտրոնակայանները և Անկարայում գտնվող դրա գրասենյակը ունիվերսալ զննվել են: Մեկ հոգի սպանվել է և տասնուփոք վիրավորվել :

27. Եղել են նաև բազմաթիվ դեպքեր, երբ, Ozgur Gundem-ի առաքման գործում ներգրավված անձինք և մեքենաները ենթարկվել են հարձակումների: Դիմողը նշել է, որ առնվազն տասնմեկ մատակարարներ և առաքիչներ սպանվել են, ներառյալ Յաչին Յաշան (տես՝ կետ 19) և Հաշիմ Յաշան (տես՝ կետ 18): Որոշ անձինք ենթարկվել են ծեծի և ծանր վիրավորվել են, և շատերը ենթարկվել են բռնության սպառնալիքների՝ եթե չդադարեին վաճառել կամ առաքել թերթը:

28. Իր պնդումները հիմնավորելու համար դիմողը վկայակոչել է տարբեր հրապարակումներ, որոնք պարունակում էին տեղեկատվություն, նաև արտահայտում էին անհանգստություն թուրքիայում խոսքի ազատության ոտնահարման վերաբերյալ, ներառյալ «Ինչ պատահեց մամուլին 1993 թվականին» հոդվածը՝ տպագրված Ozgur Gundem-ում, քաղվածքներ 1993 Info-Turk-ից (E.208-7, E.209-6, E.212-8/9), Միացյալ Նահանգների՝ Թուրքիայի վերաբերյալ 1994 թվականի զեկույցից և «L'intimidation – rapport sur les meurtres de journalistes et les pressions sur la presse turque» հրապարակումը «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպության կողմից (1993):

2. Կառավարության վարկածը

(a) **Դեպքերը, որոնցում ներգրավված էին դիմողը և նրա հորեղբայրը**

29. Կառավարությունը հաստատել է, որ 1993թ. հունվարի 15-ին կրակել են դիմողի վրա, և սպանել են հորեղբորը հունիսի 14-ին: Իրենց խնդրագրերում նրանք հղում են կատարել դատախազի վարած քննությանը, որն սկսվել էր հենց հարձակումների օրը (տես՝ կետ 35 և 41): Այդ քննությունը, որը իրականացվում էր Թուրքիայի քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան (տես՝ կետ 48), դեռևս ընթացքի մեջ էր:

30. Կառավարությունը պնդել է, որ չկա ապացույց որը կհաստատի դիմողի փաստարկն առ այն, որ անվտանգության ուժերի անդամները պատասխանատու են եղել դիմողի և նրա հորեղբոր վրա կատարված հարձակումների համար: Բացի դրանից, նրանք ժխտել են պետական իշխանության կողմից վատ

վերաբերմունքի մասին բոլոր հայտարարությունները: Նրանք ասել են, որ դիմողը երբեք պաշտոնապես համապատասխան իշխանություններին չի բողոքել այն մասին, որ հարձակվողները եղել են պետական ծառայողներ: Ավելին, ապացույց չի եղել, որը կհաստատի դիմողի այն հայտարարությունը, որ ոստիկանության պաշտոնյան իրեն ասել է, որ փաստորեն ինքն է եղել իր հորեղբորը սպանողների թիրախը:

(b) Զրդամետ թերթեր առաքող անձանց նկատմամբ հարձակումների արշավը

31. Կառավարությունը ժխտել է որևէ հայտարարության ճշմարտացիությունն, առ այն, որ եղել է պաշտոնական ահաբեկչություն այն մարդկանց նկատմամբ, ովքեր ինչ-որ կերպ կապված են եղել թերթի վաճառքի հետ: Նրանք ասել են, որ նման թերթեր վաճառվում են հարյուրավոր կրպակներում և ազատորեն մատչելի են ամբողջ Թուրքիայում: Կառավարությունը խոստովանել է, որ որոշ դեպքերում այդ թերթերի կոնկրետ համարներ բռնագրավվել են (տես՝ կետ 22): Ինչևէ, միշտ էլ իրավական որոշումների հիման վրա իրականացվել են միջոցառումներ, որոնք չեն կրել ոչ կամայական և ոչ էլ բռնի բնույթ:

Բ. Հանձնաժողովի բացահայտած փաստերը

32. Հաշվի առնելով, որ հայտարարություններն ունեին այնպիսի ծավալ և բնույթ, որ չէին կարող հեշտությամբ ընդունելի լինել և հաստատվել բանավոր վկայություններով, Հանձնաժողովը կողմերի հետ խորհրդակցելուց հետո որոշել է հայտարարությունները քննել կողմերի ներկայացրած գրավոր նյութերի հիման վրա: Հանձնաժողովի բացահայտումներն ընդհանուր առմամբ հետևյալն են:

1. Դիմողի վրա կրակելու և նրա հորեղբորն սպանելու վերաբերյալ բացահայտումները

33. Հանձնաժողովը գտել է, որ գանգատի հիմքում ընկած փաստերը վիճարկելի չեն: Դիմողի վրա կրակել են և նրան լուրջ վիրավորել 1993թ. հունվարի 15-ին երկու անձանց կողմից կատարված հարձակման արդյունքում: Նրա հորեղբոր՝ Հաշիմ Յաշայի վրա կրակել են և սպանել, դա կատարվել է 1993թ. հունիսի 14-ին՝ մի զինված անձնավորության կողմից:

34. Հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ այդ ամենից առաջ չի եղել որևէ ապացույց, որը հստակորեն կհաստատեր այն, որ անվտանգության ուժերի գործակալները կամ

նստիկանությունն է ներքաշված դիմողի և նրա հորեղբոր վրա կրակելու դեպքի մեջ: Հանձնաժողովը նաև գտել է, որ դիմողի զանգատները հիվանդանոցում նստիկանության կողմից կիրառված արգելքների և իր հորեղբոր թաղումից հետո կալանքի տակ գտնվելու ժամանակ եղած վատ վերաբերմունքի վերաբերյալ, հիմնավորված չեն եղել: Սակայն, հաշվի առնելով «Ozgur Gundem-ի սեփականատեր և լրագրող պրն Յաշար Քարայի՝ նախարարի մակարդակով ի պաշտպանություն ներկայացված բողոքները և զանգատները և նաև թերթի հետ կապված անձանց նկատմամբ հարձակումների զգալի քանակը», Հանձնաժողովը գտել է, որ կառավարությունը պետք է կամ պարտավոր էր տեղյակ լինել, որ այդ թերթի հրատարակման և առաքման մեջ ներգրավված մարդիկ վախենում են գոհ գնալ այդ համաձայնեցված արշավին, որը հանդուրժվում, եթե ոչ՝ թույլատրվում է, պետական պաշտոնյաների կողմից (տես՝ Հանձնաժողովի զեկույցի 104-րդ կետը):

2. Վարույթները ներպետական մարմիններում

(a) **Դիմողի վրա կրակելու հետ կապված վարույթները**

35. Համաձայն նստիկանության 1993թ. հունվարի 15-ի զեկուցագրի, կրակոցը տեղի է ունեցել մոտավորապես ժամը 7.15-ին Տուրիստիկ փողոցի վրա: Դատական փորձաքննության համար վերցվել են տասնհինգ դատարկ փամփուշտներ և երկու պարկուճ, բացի դրանից վերարտադրվել է դեպքի վայրի հատակագիծը: Կրակոցների օրը նստիկանությունը դիմողի կրպակից հայտնաբերել է նրա ատրճանակը: Ոստիկանությունը կրպակում ձերբակալել է Շ. Ալթունհանին և երկու տաքսու վարորդների, որոնցից մեկն այն վարորդն էր, ում դիմողը վստահել էր իր ատրճանակը, իսկ մյուսը՝ այն վարորդը, ով կրպակ էր բերել ատրճանակը (տես՝ կետ 13): Ոստիկանությունը նրանցից մանրակրկիտ ցուցմունքներ է վերցրել:

36. Ի պատասխան անվտանգության նստիկանության 1993թ. հունվարի 15-ի հարցման, հիվանդանոցի բժիշկն արձանագրել է դիմողի վրա առկա հետևյալ վնասվածքները՝ ձախ նստատեղում մեկ գնդակի մուտք, մեկ գնդակի մուտք և ելք ձախ նախաբազկի միջին հատվածում, մեկ գնդակի քերծվածք ձախ ձեռքի ցուցամատին, մեկ գնդակի մուտք և ելք աջ ձեռքի վերին հատվածի միջին մասում՝ արմունկի և ուսի միջև ընկած հատվածում և մի գնդակի դիպչելուց թեթև քերծվածք մաշկի հյուսվածքում, թևատակի հատվածում:

37. 1993թ. հունվարի 17-ին, իր փաստաբանի ներկայությամբ, դիմողը ցուցմունք է տվել ոստիկանությանը, որում նա նկարագրել է հարձակումը: Նա նշել է, որ հարձակվողները մտադիր էին սպանել իրեն, քանի որ ինքն ուներ թերթի կրպակ, որտեղ վաճառում էր ձախ ուղղվածություն ունեցող թերթեր: Նա բացատրել է, քանի որ նախկինում եղել են նաև այլ հարձակումներ նման թերթերի վաճառքով զբաղվող անձանց վրա, նա հարձակումից երեք-չորս օր առաջ գնել էր ատրճանակ և այն պահում էր իր մոտ (տես՝ կետ 16):

38. Դեպքի ամփոփիչ գեկույցում, որը կազմվել է 1993թ հունվարի 17-ին՝ կրակոցների առիթով, և վերնագրված է «Հանցագործության գրանցում թիվ 1993/C-14», դիմողը վկայակոչվում է որպես վիրավորված կասկածյալ, և նշվում է, որ կան նաև այլ (չբացահայտված) կասկածյալներ:

39. 1993թ. հունվարի 20-ին և ապրիլի 14-ին Դիարբեքիրի դատախազը անվտանգության համապատասխան մարմիններից պահանջել է քննել դիմողի վրա հարձակման դեպքը և ձերբակալել կասկածյալներին: Վերջին նշված անսաքվին դատախազը նաև պահանջել է, որ Գլխավոր դատախազությանը քննության ընթացքի մասին տեղյակ պահվի յուրաքանչյուր երեք ամիսը մեկ, մինչև օրենքով նախատեսված ժամկետի լրանալը, այսինքն՝ մինչև 1998թ. հունվարի 15-ը:

40. Դատաձգաբանական փորձաքննության եզրակացությունը՝ ստացված Դիարբեքիրի տարածքային քրեական ոստիկանության լաբորատորիայից 1993թ. փետրվարի 11-ին, ցույց էր տալիս, որ դեպքի վայրում ոստիկանության կողմից հայտնաբերված երկու փամփուշտներն, ունեն նույն հետքերը և նշանները, ինչ որ ունեն երկու այլ անձանց կողմից համապատասխանաբար 1992թ. նոյեմբերի 3-ին և 1993թ. փետրվարի 11-ին Դիարբեքիրում կրակված փամփուշտները:

(b) Հաշիմ Յաշայի սպանությունը

41. Հաշիմ Յաշայի սպանության առթիվ հարուցվել է թիվ 1993/2248 քրեական գործը: 1993թ. հունիսի 14-ին կատարված դիագնոստիկ արձանագրության համաձայն՝ Հաշիմ Յաշայի մարմնի վրա հայտնաբերվել է հրազենային չորս վնասվածք, որոնցից երկուսը եղել են ճակատագրական:

42. Կրակոցներից հետո ոստիկանությունը պատրաստել է դեպքի վայրի սխեման և 1993թ. հունիսի 14-ին վկաներից վերցրել է ցուցմունքներ: Ըստ Վ. Միմսեքի՝ կրակոցները լսելուց հետո նա տեսել է ինչ-որ մեկին, որին չի ճանաչել, և որը վազելիս է եղել

փողոցում հավաքված մարդկանց հետևով: Ռ. Օրհանը, ով խանութ ունի այդ փողոցում, լսել է կրակոցները, բայց չի տեսել կրակողներին: Հասնելով դեպքի վայր՝ նա օգնել է Հաշիմ Յաշային, որը պառկած է եղել գետնին, նստեցրել է նրան տաքսի՝ հիվանդանոց հասցնելու համար:

43. Ոստիկանության կողմից Հաշիմ Յաշայի որդու հարցաքննության արձանագրությունից երևում է, որ չնայած նա տեսել է հարձակվողին, բայց չի ճանաչել նրան: Նա ասել է, որ հարձակվողը, որը եղել է մոտ 20-25 տարեկան և ունեցել է մոտ 1.70 սմ հասակ, շարունակել է կրակել իր հոր վրա, չնայած վերջինս արդեն ընկել էր գետնի վրա առաջին կրակոցից հետո: Այնուհետև հարձակվողը դիմել է փախուստի:

44. 1993թ. հունիսի 21-ին կատարված դատաձգաբանական փորձաքննության արձանագրությունը ցույց է տվել, որ դեպքի վայրից հայտնաբերված պարկուճները չափազանց տճկացած են եղել արդյունավետ ստուգման համար:

45. Հանձնաժողովին հանձնված փաստաթղթերի մեջ այս դեպքի առնչությամբ ձեռնարկված որևէ այլ քննչական գործողության մասին տեղեկատվություն չկար: Սակայն Կառավարության գրավոր ուսումնասիրություններին կից կար նաև մի նամակ, որը Դիարբեքիի ազգային անվտանգության դատարանին կցված դատախազը 1995թ. նոյեմբերի 2-ին ուղարկել էր Արդարադատության նախարարին, այդ նամակում ասվում է՝

«Հայտարարությունը ... ամբողջությամբ չի համապատասխանում իրականությանը: Հարավարևելյան Անատոլիայում պետության համար աշխատող զինյալներ չկան: Այդ տարածքում կան զինված բախումներ զինված կազմավորումների միջև, և այդ բախումները ծագում են նման կազմավորումների կողմից միմյանց միջև եղած հաշիվները մաքրելու հետևանքով: Այն հայտարարությունները, որ այդ դեպքերին մասնակից է նաև պետությունը, և զինված անձինք գործում են նրա կողմից, վրդովեցուցիչ են ...»:

C. Դատարան ներկայացված նոր ապացույց

46. Դիմողը Դատարանին ներկայացրել է վարչապետի աշխատակազմի տեսուչների վարչության վերջին զեկույցի պատճենը: Այդ գաղտնի զեկույցը («Սուսուրլուքի զեկույց»), սկզբում նախատեսված է եղել միայն վարչապետի համար, որը և հանձնարարել էր դրա պատրաստումը 1997թ. օգոստոսի 17-ին:

1998թ. հունվարին՝ զեկույցն ստանալուց հետո, վարչապետը այն դարձրել է հասարակության համար մատչելի, չնայած զե-

կույցի հիմնական տեքստից տասնմեկ էջ և դրա հավելվածները թաքցվել էին հասարակությունից: Դատարանի կողմից գործը քննելու ընթացքում էլ դեռ Թուրքիայում զեկույցը շարունակում էր մնալ ուշադրության կենտրոնում:

Ներածության մեջ ասվում է, որ զեկույցը հիմնված չէ դատական քննության վրա և չի հանդիսանում ֆորմալ քննչական զեկույց: Այն ունի միայն տեղեկատվական նպատակներ և չի ենթադրում անել ավելին, քան Թուրքիայի հարավ-արևելքում տեղի ունեցող որոշակի դեպքերի նկարագրությունն է, ինչը նպատակ ունի հաստատելու եռակողմ հարաբերությունների առկայությունը, որը ներառում է նաև քաղաքական գործիչների, կառավարական հաստատությունների և գաղտնի խմբերի միջև անօրինական գործարքները:

Չեկույցում վերլուծում են մի շարք դեպքեր, ինչպիսիք պատվերով սպանություններն են, հանրահայտ մարդկանց կամ քրդերին աջակցողների սպանությունները, և հավանաբար, պետությանը ծառայող «ինֆորմատորների» մի խմբի կողմից կատարված կանխամտածված գործողություններն են, և եզրակացնում է, որ կապ կա այդ շրջանում ահաբեկչությունը վերացնելու դեմ պայքարի և դրա արդյունքը հանդիսացող ընդհատակյա հարաբերությունների միջև, մասնավորապես՝ թմրանյութերի առևտրի ոլորտում: Չեկույցի այն հատվածները, որոնք վերաբերում են արմատական պարբերականների նկատմամբ ճնշումներ գործադրելու որոշակի դեպքերին, ստորև վերարտադրված են:

«... Դիարբեքիի քրեական վարչությունում արած իր խոստովանությունում, ... պրն Չ. նշել է, որ Ահմեթ Դեմիրը (էջ 35) ժամանակ առ ժամանակ ասում էր, որ ինքն է ծրագրավորել իրականացրել Բեհչեթ Սանթյուրքի ու մաֆիայի և PKK (ԶԲԿ-ի) անդամ այլ պարտիզանների սպանությունները, որոնք սպանվել են նույն ձևով: Մուսա Անթերի սպանությունը նույնպես ծրագրավորվել և իրականացվել է Ահմեթ Դեմիրի կողմից (էջ 37):

...

Բեհչեթ Սանթյուրքի, որը ծագումով հայ էր, նախորդների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն ներկայացված է ստորև (էջ 72).

...

1992թ. նա եղել է Ozgur Gundem թերթի ֆինանսավորողներից մեկը. ... Չնայած ակնհայտ էր, թե ով է Սանթյուրքը և ինչով էր նա զբաղվում, պետությունը չէր կարողանում պայքարել նրա դեմ: Քանի որ իրավական միջոցները պատշաճ չէին, Ozgur

Gundem-ը պայթեցվել է պլաստիկ պայթուցիկներով¹, և երբ Մանքյուրքը սկսել է իրականացնել նոր ձեռնարկում այն պարագայում, երբ սպասվում էր, որ նա պետք է ենթարկվի պետությանը, Թուրքիայի անվտանգության կազմակերպությունը որոշել է, որ նա պետք է սպանվի, և այդ որոշումն իրականացվել է (էջ 73)

....

Բոլոր համապատասխան պետական մարմինները տեղյակ են եղել այս գործողություններին և գործունեությանը:... Երբ խնդրո առարկա գործողությունների ժամանակ սպանված անձանց բնութագրերն ստուգվել են՝ արտակարգ դրություն հայտարարված շրջանում սպանված նրանց քուրդ աջակիցների և ֆինանսական հնարավորություններ չունեցողների միջև եղած սպանությունների տարբերության լույսի ներքո, վերջին սպանությունը ներկայացվել է որպես տնտեսական բնույթի սպանություն:.... Մեր անհամաձայնությունը կատարվածի կապակցությամբ վերաբերում է միայն կատարվածի ընթացակարգին և դրա արդյունքներին: Նշվել է, որ ափսոսանք կա Մուսա Անթերի սպանության առթիվ, նույնիսկ նրանց շրջանում ովքեր հավանություն են տալիս բոլոր այս գործողություններին: Նշվում էր, որ Մուսա Անթերը ներգրավված չի եղել որևէ զինված գործողության մեջ, որ նա ավելի շատ կապված էր խնդրի փիլիսոփայության հետ և նրա սպանության արձագանքներն ավելացրել են նրա ազդեցությունը, և նրան սպանելու որոշումը սխալ էր: (Այս մարդկանց վերաբերյալ տեղեկատվությունը տես Հավելված 9-ում²)» Սպանվել են նաև այլ լրագրողներ (էջ³ 74):

II. ԳՈՐԾԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

47. Օրենքին հակասող գործողությունների համար պատասխանատվության հետ կապված սկզբունքները և ընթացակարգերը համառոտ շարադրված են ստորև:

A. Քրեական հետապնդումներ

48. Համաձայն քրեական օրենսգրքի՝ սպանության բոլոր տեսակները (հոդվածներ 448-455) և սպանության փորձի բոլոր տեսակները (հոդվածներ 61 և 62) համարվում են հանցագոր-

¹ Տես՝ կետ 26:

² Հավելվածը զեկույցում չկա

³ Ibid. վերջին նախադասությանը հաջորդող էջը

ծություններ: Իշխանությունների պարտականությունները՝ կապված նման հանցագործությունների իրականացման պատճառ հանդիսացած գործողությունների կամ անգործության առնչությամբ նախնական քննություն իրականացնելու հետ, կարգավորվում են Քրեական դատավարության օրենսգրքի 151-153-րդ հոդվածներով: Խախտումների մասին կարող են հայտնել անվտանգության ուժերի մարմիններին կամ անդամներին, ինչպես նաև դատախազությանը: Բողոքը (հայտարարությունը) կարող է տրվել գրավոր կամ բանավոր: Եթե այն արվում է բանավոր, ապա համապատասխան մարմինը պետք է արձանագրի այն (հոդված 151): Եթե կան ապացույցներ, որոնք չեն բացառում այն հանգամանքը, որ մահը վրա է հասել ոչ բնական ձևով, ապա այդ փաստին տեղյակ անվտանգության ուժերի անդամներից պահանջվում է այդ մասին տեղեկացնել դատախազին կամ քրեական դատարանի դատավորին (հոդված 152): Համաձայն քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի, ցանկացած պետական պաշտոնյա, ով չի հայտնել ոստիկանությանը կամ դատախազությանն այն իրավախախտման մասին, որի կատարմանն ինքը տեղյակ է եղել իր պարտականությունների բերումով, ենթակա է ազատազրկման:

Դատախազը, որը որևէ ձևով տեղյակ է եղել ցանկացած իրավիճակի մասին, որը կասկած է հարուցում, այն առթիվ, որ կարող է իրավախախտում տեղի ունեցած լինել, պարտավոր է ուսումնասիրել փաստերը, որպեսզի որոշի՝ պետք է իրականացնել քրեական հետապնդում, թե՛ ոչ (Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 153):

49. Եթե կասկածյալը քաղաքացիական ծառայող է և հանցագործությունը կատարվել է նրա կողմից՝ իր պարտականությունները կատարելու ընթացքում, նախնական քննություն իրականացվում է «Քաղաքացիական ծառայողների նկատմամբ քրեական հետապնդման մասին» 1914 օրենքի համաձայն, որը սահմանափակում է դատախազի լիազորությունները *ratione personae* քննության այդ փուլում: Նման դեպքերում համապատասխան տեղական Վարչական Խորհուրդն է (շրջանային կամ մարզային՝ կախված կասկածյալի կարգավիճակից) վարում նախնական քննությունը և հետևաբար, նա է որոշում՝ պետք է իրականացնել քրեական հետապնդում, թե՛ ոչ: Միաժամանակ, եթե ընդունվել է քրեական հետապնդում իրականացնելու մասին որոշում, գործի քննությունն իրականացնում է դատախազը:

Խորհրդի որոշումը վերանայվում է Գերագույն վարչական դատարանի կողմից: Եթե ընդունվում է քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում, գործն ինքնաբերաբար ուղարկվում է այդ դատարան:

50. Ըստ 1987թ. հուլիսի 10-ի թիվ 285 հրամանագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի արտակարգ իրավիճակում գտնվող շրջանի կառավարիչը նույնպես կարող է 1914թ. օրենքը կիրառել իր իշխանության տակ գտնվող անվտանգության ուժերի անդամների նկատմամբ:

51. Եթե կասկածյալը զինված ուժերի անդամ է, ապա կիրառվելիք օրենքը որոշվում է՝ ելնելով հանցագործության բնույթից: Այսպես, եթե իրականացվել է Չինվորական քրեական օրենսգրքով (Օրենք թիվ 1632) նախատեսված «զինվորական հանցագործություն», քրեական վարույթն սկզբունքորեն իրականացվում է Չինվորական դատարանների մասին թիվ 353 օրենքին և այդ դատարանների կանոնակարգին համապատասխան: Եթե զինված ուժերի անդամը մեղադրվում է սովորական հանցագործության մեջ, ապա կիրառվում են Քրեական դատավարության օրենսգրքի դրույթները (տես՝ Մահմանադրության հոդված 145, կետ 1 և թիվ 353 Օրենքի 9-14 գլուխները):

Չինվորական քրեական օրենսգիրքը զինված ուժերի անդամի համար զինվորական հանցագործություն է համարում հրամանին չենթարկվելու միջոցով անձի կյանքը վտանգի ենթարկելը (հոդված 89): Նման դեպքերում քաղաքացիական անձինք կարող են իրենց բողոքները ներկայացնել Քրեական դատավարության օրենսգրքում նշված մարմիններին (տես՝ կետ 48) կամ հանցագործություն կատարած անձի վերադասին:

Բ. Քրեական հանցագործություններից բխող քաղաքացիական և վարչական պատասխանատվություն

52. Համաձայն Վարչական դատավարության մասին թիվ 2577 օրենքի՝ յուրաքանչյուր ոք, ով իշխանությունների գործողությունների արդյունքում վնաս է կրել, կարող է այդ գործողության կատարումից հետո մեկ տարվա ընթացքում պահանջել փոխհատուցում: Եթե բողոքը լրիվ կամ մասամբ մերժվել է, կամ եթե պատասխան չի ստացվել վաթսուն օրվա ընթացքում, տուժողը կարող է հարուցել վարչական վարույթ:

53. Մահմանադրության 125-րդ հոդվածի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝

«Իշխանությունների բոլոր գործողությունները ենթակա են դատական վերահսկողության.....

Իշխանությունները պետք է պատասխանատու լինեն և հատուցեն բոլոր վնասները, որոնք պատճառվել են իրենց գործողությունների և ձեռնարկած միջոցառումների հետևանքով»

...

Այդ դրույթը սահմանում է պետության անվերապահ պատասխանատվությունը՝ որը գործում է, երբ պարզվում է, որ կոնկրետ դեպքի հանգամանքներում պետությունը չի կատարել հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման կամ մարդկանց կյանքի կամ սեփականության պաշտպանության իր պարտականությունը: Այս նորմերի հիման վրա իշխանությունները կարող են կրել անհայտ անձանց կողմից կատարված գործողությունների արդյունքում ցանկացած անձի պատճառված վնասի հատուցման պարտականություն:

54. 1990թ. դեկտեմբերի 16-ին ընդունված թիվ 430 հրամանի 8-րդ հոդվածը, որի վերջին նախադասությունը բխում է նշված դրույթից (տես՝ կետ 53), ամրագրում է՝

«Ոչ մի քրեական, ֆինանսական կամ իրավական պատասխանատվություն չեն կարող ենթարկվել արտակարգ դրության մեջ գտնվող շրջանի կամ մարզի ղեկավարները՝ դեմ նրանց կողմից՝ Օրենսդրական հրամանով իրենց վերապահված լիազորությունների իրականացման կապակցությամբ, և որևէ դատական մարմնի այս կապակցությամբ չպետք է տրվի որևէ դիմում: Մաչպետք է վնաս պատճառի հակաօրինական գործողությունների արդյունքում պետությունից վնաս կրած անձանց իրավունքներին»:

55. Համաձայն Պարտավորությունների մասին օրենսգրքի՝ յուրաքանչյուր ոք, ով հակաօրինական կամ հակաիրավական արարքի արդյունքում վնաս է կրել, կարող է հայց հարուցել նյութական (հոդվածներ 41-46) կամ ոչ նյութական (հոդված 47) վնասների հատուցման համար: Զաղաքացիական դատարանները կաշկանդված չեն պաշտպանյալի մեղավորության վերաբերյալ քրեական դատարանների որոշումներով կամ դատավճիռներով:

Ինչևէ, համաձայն «Պետական ծառայողների մասին» թիվ 657 օրենքի 13-րդ հոդվածի, յուրաքանչյուր ոք, ով վնաս է կրել հանրային իրավունքի նորմերով կարգավորվող պարտականությ-

յունների իրականացման ընթացքում կատարված գործողության արդյունքում, կարող է սկզբունքորեն հայց ներկայացնել միայն ընդդեմ այն մարմնի, որտեղ աշխատում է այդ պետական ծառայողը, և ոչ թե ուղղակիորեն ընդդեմ այդ պետական ծառայողի (տես՝ Սահմանադրության 129-րդ հոդվածի 5-րդ կետը և Պարտավորությունների մասին օրենսգրքի 55-րդ և 100-րդ հոդվածները): Սակայն սա բացարձակ կանոն չէ: Երբ պարզվում է, որ գործողությունը հակաօրինական կամ հակաիրավական է և, հետևաբար, այլևս «վարչական» արարք կամ գործողություն չէ, քաղաքացիական դատարանները կարող են թույլ տալ, որ վնասների հատուցման հայց հարուցվի ընդդեմ տվյալ պաշտոնյայի, առանց սահմանափակելու համապատասխան մարմնի որպես պաշտոնյայի գործատուի համատեղ պատասխանատվության հիմքով հայց ներկայացնելու տուժողի իրավունքներին ընդդեմ (Պարտավորությունների մասին օրենսգրքի 50-րդ հոդված):

ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

56. Դիմողը 1993թ. հուլիսի 12-ին դիմել է Հանձնաժողովին՝ բողոքելով հարձակումներից, որոնց արդյունքում ինքը լուրջ վիրավորվել է, իսկ իր հորեղբայրը՝ սպանվել: Նա նաև բողոքել է, որ ոստիկանությունում կալանքի տակ եղած ժամանակ իր նկատմամբ ցուցաբերվել է վատ են վերաբերմունք, և ինքը հնարավորություն չի ունեցել դիմելու դատարան կամ կիրառելու այլ արդյունավետ պաշտպանության միջոց կապված հարձակումների և վատ վերաբերմունքի հետ: Նա հիմք է ընդունել Կոնվենցիայի 2-, 3, 6, 10, 13, 14- և 18-րդ հոդվածները:

57. 1995թ. ապրիլի 3-ին Հանձնաժողովը գանգատը (թիվ 22495/93) հայտարարել է մասնակի ընդունելի: 1997թ. ապրիլի 8-ի իր գեկույցում (հոդված 31), Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ եղել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում (երեսուն քվե, երկու դեմ), որ չի եղել 3-րդ հոդվածի խախտում (միաձայն), որ 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով դիմողի գանգատը չի բարձրացնում առանձին հարց, և որ չի եղել 10-րդ հոդվածի խախտում (երեսունմեկ քվե ընդդեմ մեկի), որ 13-րդ հոդվածի հիմքով բերված դիմողի բողոքը չի բխում որևէ կոնկրետ հարցից (երեսուն քվե մեկի դիմաց), որ չի եղել 14-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի խախտում (միաձայն):

ԴԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

58. Դիմողը որոշել է չշարունակել 3-րդ և 6-րդ հոդվածների հիման վրա Հանձնաժողովին ներկայացված գանգատների ընթացքը: Իր խնդրագրում և լսումների ժամանակ նա Դատարանին խնդրել է ամրագրել, որ գործի փաստերը բացահայտում են 2, 10 և 13-րդ հոդվածների խախտումներ 14-րդ հոդվածի հետ համատեղ կամ առանձին վերցրած, ինչպես նաև 18-րդ հոդվածի խախտում և որ այդ խախտումները խստանում են պատասխանող պետության կողմից ցուցաբերվող հանդուրժողականության հետևանքով: Այդ կապակցությամբ նա դատարանին խնդրել է ընդունել Սուսուրլուքի զեկույցի բովանդակությունը (տես՝ կետ 46)՝ որպես իր գանգատների առնչությամբ նոր ապացույց (տես՝ կետեր 21-28)

Նա նաև խնդրել է Դատարանին պահանջել պատասխանող պետությունից վճարել հատուցում ոչ դրամական վնասի և դրամական վնասի համար, որ իրեն պատճառվել էր, և իր հորեղբոր մերձավոր հարազատների կրած ոչ դրամական վնասների համար, ինչպես նաև փոխհատուցել իր կրած ծախսերը և ծախսերը:

59. Կառավարությունը՝ և՛ իր հուշագրում, և՛ լսումների ժամանակ, Դատարանին խնդրել է գանգատը հայտարարել անընդունելի անընդունելի, քանի որ դիմողն իրավասու չէ գանգատ ներկայացնել իր հորեղբոր հետ կապված, և, բացի դրանից սպառված չեն եղել ներպետական պաշտպանության միջոցները: Որպես այլընտրանք. նրանք նշել են, որ ըստ փաստերի՝ դիմողի կողմից նշված դրույթների խախտում չի եղել: Լսումների ժամանակ Կառավարությունը նաև Դատարանին խնդրել է Սուսուրլուքի զեկույցը ճանաչել անընդունելի ապացույց:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

60. Հանձնաժողովին ներկայացված գանգատում դիմողի փաստաբանը հայտարարել է, որ խախտվել են նաև Կոնվենցիայի 3-րդ և 6-րդ հոդվածները (տես՝ կետեր 1 և 56):

Դատարանին ուղղված խնդրագրում, սակայն նրանք ընդունել են Հանձնաժողովի եզրակացություններն առ այն, որ չի եղել 3-րդ հոդվածի խախտում և որևէ առանձին հարց չի բխում 6-րդ

հողվածի 1-ին կետի կապակցությամբ (տես՝ կետ 57): Քանի որ նրանք չեն պնդել իրենց զանգատները Դատարանում, վերջինս պատճառ չգտավ դրանք հաշվի առնել իր նախաձեռնությամբ (տես՝ *mutatis mutandis*, Թուրքիայի Միացյալ կոմունիստական կուսակցությունը և այլոք ընդդեմ Թուրքիայի 1998թ. հունվարի 30-ի վճիռը, Որոշումների և վճիռների ժողովածու 1998-1. էջ 28, կետ 62):

2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

A. Արդյոք դիմողը եղել է տուժող

61. Ինչպես նախկինում Հանձնաժողովի առջև, Դատարանի առջև ևս Կառավարությունը վիճարկել է այն հանգամանքը, որ պրն Էշրեֆ Յաշան իրավունք չունի իր զոհված հորեղբոր մասով զանգատ ներկայացնել, քանի որ ապացուցված չէ, որ նրանք հորեղբայր և զարմիկ են, եթե նույնիսկ նրանք հորեղբայր և զարմիկ են, ապա միևնույն է, նրանք ուղիղ գծով հարազատներ չեն: Ունենալով տարիքային նվազ տարբերություն և դժվարություն՝ որոշելու, թե ով ում բարեկամն է Թուրքիայում, միանգամայն հնարավոր է, որ դիմողը և պրն Յաշան լինեն պարզապես երկրորդ կամ երրորդ կարգի զարմիկներ: Սույն դեպքում ոչինչ չէր խանգարում զոհվածի ավելի մերձավոր հարազատներին, որոնք բավականին շատ են, մասնակցել Կոնվենցիոն հաստատություններում ընթացող դատավարություններին: Բացի դրանից, այս հարցի վերաբերյալ Հանձնաժողովի նախադեպային իրավունքը չի պարունակում զարմիկի կողմից Կոնվենցիայի 25-րդ հոդվածի հիման վրա զանգատ ներկայացնելու իրավունքն իրականացնելը թույլատրելու օրինակ: Ճիշտ փաստարկ չէ նաև այն, որ Հանձնաժողովն իր որոշումը հիմնավորել է այն հանգամանքով, որ կան գործնական հարաբերություններ դիմողի և իր հորեղբոր միջև, սակայն դա այդպես չէ, քանի որ նրանք նույն առևտրով չեն զբաղվում, և սույն գործով բերված զանգատներն առևտրային բնույթ չեն կրում:

62. Լսումների ժամանակ դիմողի փաստաբանը սահմանափակվել է նշելով, որ Հանձնաժողովում վարույթի ընթացքում կառավարությունն ընդունել է, որ պարոն Հաշիմ Յաշան դիմողի հորեղբայրն է:

63. Իր զեկույցում Հանձնաժողովը նշում է, որ իր հորեղբոր սպանության առթիվ բողոքելիս ժամանակ դիմողը «գործում է այնպես, որ ինքն էլ իր հերթին... տուժել է... և ոչ թե որպես իր հո-

րեղբոր ներկայացուցիչ» (տես՝ Հանձնաժողովի զեկույցի 88-րդ - կետը): Դատարանում լուսնների ժամանակ Հանձնաժողովի պատվիրակը տեսակետ է հայտնել այն մասին, որ եթե հարազատը ցանկանում է բողոքել այնպիսի կարևոր հարցի կապակցությամբ, ինչպիսին իր մերձավոր ազգականի սպանությունն է, պահանջվում է, որ նա բավարար ձևով ցույց տա, որ անհանգստացած է այդ պատահարով:

64. Դատարանը կրկնել է, որ Կոնվենցիայի, որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոլեկտիվ իրագործման համաձայնագրի, նպատակը և առարկան պահանջում են, որ դրա դրույթները մեկնաբանվեն և կիրառվեն դրա առանձնահատուկ բնույթի լույսի ներքո, և այնպես, որ դրա երաշխիքները լինեն ավելի գործնական և արդյունավետ (տես՝ Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի 1995թ. մարտի 23-ի վճիռը (նախնական առարկություններ) Շարքեր A թիվ 310, էջեր 26-27, կետեր 70-72):

65. Սույն գործով իր գրավոր բացատրություններում Կառավարությունն առաջին անգամ դիմել է Հանձնաժողովին որոշում ընդունել առ այն, որ դիմողը սույն գործով տուժող չէ (տես՝ Հանձնաժողովի զեկույցի կետեր 13 և 86): Դատարանը գտավ, որ Կառավարությունն այդ բացատրություններում չի վիճարկում այն հանգամանքը, որ մահացածը դիմողի հորեղբայրն է: Ուստի դատավորը գրկվում է դատարանում այն փաստը ժխտելու հնարավորությունից, որ մահացածը և դիմողն այդ աստիճանի հարազատներ են: Պետք է նաև նշվի, որ պրն Էշրեֆ Յաշան իր դիմումում պնդում է, որ գործում առկա խախտման փաստերը վերաբերում են ոչ միայն իր սպանված հորեղբոր՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքներին, այլ նաև իր իրավունքներին:

Ինչ վերաբերում է նրան, որ դիմողը և զոհվածն ունեին ընդհանուր գործնական շահեր, և կառավարության պնդմանը, որը, ի դեպ, հիմնավոր չէ, որ գործնականում պրն Հաշիմ Յաշան ունի մի շարք մերձավոր ազգականներ, ապա Դատարանն անհրաժեշտ չգտավ ստուգել այնպիսի փաստարկներ, որոնց արդյունքը գործի համար էական նշանակություն չէր ունենալու:

66. Դատարանը կիսել է հանձնաժողովի և պատվիրակի կարծիքը (տես՝ կետ 63 և Հանձնաժողովի զեկույցի 84-88-րդ կետերը): Նախադեպային իրավունքում սահմանված սկզբունքների լույսի ներքո (տես՝ կետ 64) և հիմնվելով սույն գործի առանձին փաստերի վրա, Դատարանը գտավ, որ դիմողը, որպես սպանվածի զարմիկ, կարող է օրինական ձևով ճանաչվել տուժող իր համար այնպիսի ողբերգական մի դեպքի առիթով, ինչպիսին իր հորեղբոր սպանությունն է:

Հետևաբար, Դատարանը չի ընդունել կառավարության այս նախնական առարկությունը:

Ե. Ներպետական պաշտպանության միջոցները չսպառելը

67. Կոնվենցիայի 2, 3, 6 և 13-րդ հոդվածների առնչությամբ Կառավարությունը նշել է, որ ներպետական պաշտպանության միջոցները չեն սպառվել, քանի որ չի հարուցվել որևէ սովորական քաղաքացիական, վարչական կամ քրեական վարույթ, որոնք առկա են ըստ Թուրքիայի օրենսդրության, բացի դրանից նաև արդյունավետ են:

Կառավարությունը պնդել է, որ Հանձնաժողովը, զանգատն ընդունելի համարելով, ճիշտ որոշում չի կայացրել իր առարկության վերաբերյալ: Մասնավորապես, Հանձնաժողովը հաշվի չի առել դիմողի փաստաբանների «կանխամտածված ռազմավարությունը», որոնք խուսափել են Թուրքիայում որևէ միջոց ձեռնարկելուց, հայտարարություն են արել «վարչական պրակտիկայի» մասին, որպեսզի դրանով կարողանան իրավական հիմք ապահովել իրենց այդ բացթողումն արդարացնելու համար: Ինչևէ, դիմողը, որը հայտարարել է, որ ինքը և իր հորեղբայրը հարձակման են ենթարկվել անվտանգության ուժերի կողմից, կարող էր վարչական վարույթ հարուցել այն մարմինների դեմ, ում առջև այդ մարդիկ հաշվետու են (տես՝ կետեր 52 և 54) և քաղաքացիական հայց հարուցել՝ հակաօրինական արարքների համար վնասների հատուցման պահանջով (տես՝ կետ 55): ԵՎ, վերջապես, դիմողը կարող էր դիմել քրեական գործ հարուցելու համար (տես՝ կետեր 48-51):

68. Դիմողի փաստաբանը չի նշել ներպետական միջոցների սպառման մասին ոչ իր հուշագրում և ոչ էլ Դատարանում լսումների ժամանակ:

69. Լսումների ժամանակ Հանձնաժողովի պատվիրակը բացատրել է, որ դիմողը նշել է, որ ինքը հիվանդանոցում եղած ժամանակ, ուր իրեն տարել էին զինված հարձակումից հետո, դիմում է ներկայացրել ոստիկանությանը, այդ դիմումում նա նշել է, որ իր վրա հարձակվողները եղել են ոստիկանության պաշտոնյաներ (տես՝ կետ 16): Ինչ վերաբերում է դիմողի հորեղբոր սպանությանը, ապա Հանձնաժողովի պատվիրակը հնարավոր է համարել, որ դիմողի ձերբակալությունը, նրա նկատմամբ սպառնալիքները և վատ վերաբերմունքը, որոնց նա ենթարկվել է այդ նույն օրը, կարող են լույս սփռել այն հանգամանքի վրա, թե ինչու տուժողը բողոք չի ներկայացրել դատախազին: Պատվիրակը

նակ նշել է, որ հիվանդանոցում դիմողի ներկայացրած բողոքի բովանդակությունը ինչպիսին էլ որ լիներ, դատախազության կողմից արդեն սկսված են եղել երկու առանձին քրեական հետաքննություններ: Ուստի կարիք չի եղել դիմողից պահանջել մեկ այլ քրեական հետաքննություն սկսելու վերաբերյալ դիմում ներկայացնել կամ սպասել մինչև ավարտվեն այդ երկու քննությունները, որոնք դեռևս ընթացքի մեջ էին:

70. Ելնելով գործի շրջանակի վերաբերյալ արված իր եզրակացություններից (տես՝ կետ 60), Դատարանը Կառավարության նախնական առարկությունները հաշվի կառնի միայն այն մասով, որ մասով դրանք վերաբերում են Կոնվենցիայի 2-րդ և 13-րդ հոդվածների հիմքով բերված զանգատներին:

71. Դատարանը նշել է, որ ներպետական միջոցներն սպառելու կանոնը, որն արտացոլված է Կոնվենցիայի 26-րդ հոդվածում, պարտավորեցնում է դիմողներին սկզբում օգտագործել այն միջոցները, որոնք բնականոն ձևով մատչելի են և բավարար ներպետական իրավական համակարգում, որոնք նրանց հնարավորություն կընձեռեն բացահայտել վկայակոչված իրավախախտումները: Միջոցների առկայությունը պետք է լինի բավականաչափ որոշակի՝ թե գործնական, թե տեսական առումով, այլապես այդ միջոցները կգրկվեն մատչելիության և արդյունավետության հատկանիշներից: 26-րդ հոդվածը նաև պահանջում է, որ զանգատները նախքան Ստրասբուրգ ներկայացնելը պետք է ներկայացվեն համապատասխան ներպետական մարմիններին՝ գոնե այդ երկրների ներպետական օրենսդրության հիմքում ընկած ֆորմալ պահանջներին համապատասխան, բայց այդ միջոցները չպետք է լինեն անբավարար և անարդյունավետ (տես՝ Աքսոյն ընդդեմ Թուրքիայի գործով 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Չեկույցներ 1996-4, էջեր 2275-2276, կետեր 51-52, ինչպես նաև, Աքդիվարը և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով 1996թ. սեպտեմբերի 16-ի վճիռը, Չեկույցներ 1996-4, էջ 1210, կետեր 65-67):

72. Դատարանը նշել է, որ Թուրքիայի օրենսդրությունն ապահովում է վարչական, քրեական և քաղաքացիական պաշտպանության միջոցներ՝ ընդդեմ պետության կամ նրա պաշտոնյաների կողմից կատարված հակաիրավական և հանցավոր գործողությունների (տես՝ կետ 47):

73. Ինչ վերաբերվում է վնասի հատուցման պահանջի մասին քաղաքացիական հայցին, որը պատճառվել է պետական պաշտոնյաների անօրինական գործողությունների կամ ակնհայտ հակաօրինական վարքագծի (տես՝ կետ 55) արդյունքում, ապա Դատարանը նշել է, որ հայցվորը բացի իրավախախտման

և իր կրած վնասի միջև առկա պատճառահետևանքային կապն ապացուցելուց, պետք է նաև մատնացույց անի այն անձին, ով կատարել է իրավախախտումը: Տվյալ դեպքում, սակայն, դեռևս անհայտ է, թե ով է պատասխանատու այն գործողությունների համար, որոնց առնչությամբ դիմողը զանգատ է ներկայացրել (տես՝ կետեր 29 և 35-45):

74. Ինչ վերաբերում է իշխանությունների անվերապահ պատասխանատվության վրա հիմնված Սահմանադրության 125-րդ հոդվածին համապատասխան ներկայացվող վարչաիրավական հայցին (տես՝ կետեր 52-53), Դատարանը կրկնել է, որ Կառավարության կողմից մատնանշված միջոցը պետք է բավականաչափ և որոշակի լինի, թե գործնական, թե տեսական առումով (տես՝ Յախշին և Սարգինն ընդդեմ Թուրքիայի գործով 1995թ. հունիսի 8-ի վճիռը, Շարքեր A, թիվ 319-A, 15 17, կետ 42): Այնուամենայնիվ, Դատարանին ներկայացված փաստաթղթերում չկա որևէ անձի օրինակ, որը նման դիմողի իրավիճակի հետ համեմատելի իրավիճակում ներկայացրել է նման հայց (տես՝ *mutatis mutandis* Սաքիբը և այլք ընդդեմ Թուրքիայի գործով 1997թ. նոյեմբերի 26-ի վճիռը, Չեկույցներ 1997-7, էջ 2634, կետ 53): Բացի դրանից, ինչպես Դատարանն արդեն նշել է, վարչաիրավական հայցը պաշտպանության միջոց է, որը հիմնվում է պետության անվերապահ պատասխանատվության վրա, մասնավորապես, նրա պաշտոնյաների անօրինական գործողությունների համար, որոնց բացահայտումը պարտադիր նախադրյալ չէ նման բնույթի վարույթ սկսելու համար: Ինչևէ, քննությունները, որոնք պայմանավորվող պետությունները պարտավորվել են իրականացնել Կոնվենցիայի 2-րդ և 13-րդ հոդվածների համաձայն, մահացու ելքերով հարձակումների դեպքերում պետք է ի վիճակի լինեն բացահայտել և պատժել դրանց համար պատասխանատու անձանց (տես՝ կետեր 98-100): Ինչպես Դատարանը նախկինում նշել է, պարտավորությունը չի կարող բավարարվել սուկ վնասները հատուցելով (տես՝ Ղայան ընդդեմ Թուրքիայի գործով 1998թ. փետրվարի 19-ի վճիռը, Չեկույցներ-1998-1, էջ 329, կետ 105): Այլապես, եթե պետության անվերապահ պատասխանատվության վրա հիմնված հայցը համարվի իրավական պաշտպանության միջոց, որը պետք է սպառվեր՝ 2-րդ և 13-րդ հոդվածների հիման վրա ներկայացվող զանգատների կապակցությամբ, պետության պարտավորությունը՝ գտնելու այդ մահացու ելքով հարձակման համար մեղավոր անձանց, այդպիսով կվերանար:

75. Հետևաբար, դիմողից չէր պահանջվում քաղաքացիական կամ վարչական հայց հարուցել այս հարցի կապակցությամբ, և

այդ բնույթի հայցերի վերաբերյալ նախնական առարկությունները հիմնավորված չեն:

76. Վերջապես, ինչ վերաբերում է քրեաիրավական միջոցների, ապա Դատարանը նշել է, որ 1993թ. հունվարի 17-ին Դիարբեքիի Ազգային անվտանգության հիվանդանոցում ուտիկանությունն ընդունել է դիմողի հայտարարությունը՝ հունվարի 15-ին տեղի ունեցած դեպքի վերաբերյալ (տես՝ կետ 37): Արդյունքում, կազմված արձանագրությունից երևում է, որ դիմողը հարցաքննվել է և որպես կասկածյալ, և որպես տուժող՝ իր մոտ եղած հրազենի հետ կապված (տես՝ կետ 17): Նա ասել է, որ անհայտ անձինք փնտրել են իրեն, որ սպանեն, քանի որ նա վաճառում էր ձախ արմատական ուղղվածություն ունեցող թերթեր, նա նաև պահանջել է, որ այդ իրադարձության համար պատասխանատու անձինք բացահայտվեն և պատժվեն: Սակայն արձանագրությունից հստակ չի երևում այն հանգամանքը, որ դիմողը հստակորեն հայտարարել է, որ իր վրա հարձակվողները եղել են անվտանգության ուժերի աշխատակիցներ (տես՝ կետեր 16, 30 և 37): Այդ հայտարարությունը, այնուամենայնիվ, պարունակում էր բողոք, որը հստակորեն ներկայացված էր Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով (տես՝ կետ 48): Անկախ այդ բողոքի բովանդակությունից, անվիճելի է այն, որ իրավապահ մարմինների կողմից սկսվել են երկու առանձին քրեական հետաքննություններ, որոնցից մեկը կապված էր դիմողի վրա կատարված հարձակման հետ (տես՝ կետ 35), մյուսը՝ նրա հորեղբոր սպանության հետ (տես՝ կետ 41):

77. Դատարանը շեշտել է, որ ներպետական պաշտպանության միջոցների կանոնի կիրառումը, պետք է հաշվի առնի այն փաստը, որ այն կիրառվում է մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմի համատեքստում, որը Պայմանավորվող պետությունները համաձայնել են ամրագրել: Ուստի ընդունվում է այն հանգամանքը, որ 26-րդ հոդվածը պետք է կիրառվի որոշակի ճկունությամբ և առանց չափազանց ձևականության: Ընդունվել է նաև այն, որ ներպետական պաշտպանության միջոցների սպառման մասին կանոնը բացարձակ կանոն չէ, և ոչ էլ ինքնաբերաբար կիրառվող կանոն, դրա կիրառման հնարավորությունը պարզելու նպատակով նախ և առաջ պետք է ուսումնասիրվեն կոնկրետ գործի հանգամանքները: Մա նշանակում է, որ Դատարանը պետք է ավելի իրատեսորեն մոտենա հարցին և հաշվի առնի ոչ միայն մասնակից պետության իրավական համակարգում ֆորմալ միջոցների առկայությունը, այլ նաև ընդհանուր ենթատեքստը, որում գործում են այդ միջոցները, ինչպես նաև դիմողի

հետ կապված անձնական հանգամանքները: Նա պետք է ստուգի գործի բոլոր հանգամանքները, նաև այն, թե արդյոք դիմողն արել է խելամտության սահմաններում իրենից պահանջվող ամեն ինչ, որպեսզի սպառի ներպետական միջոցները (տես՝ վերը հիշատակված Աքդիվարը և այլոք վճիռը, էջ 1221, կետ 69, և վերը հիշատակված Ասրոյի վճիռը, էջ 2276, կետեր 53 և 54):

78. Դատարանը գտնում է, որ Կառավարության նախնական առարկությունների այս վերջին հատվածը բարձրացնում է հարցեր, որոնք սերտորեն կապված են տուժողի զանգատում բարձրացված հարցերի հետ, կապված Կոնվենցիայի 2-րդ և 13-րդ հոդվածների հետ:

79. Հետևաբար, Դատարանը չի ընդունում Կառավարության նախնական առարկությունները՝ այնքանով որքանով դրանք առնչվում են քաղաքացիական և վարչական պաշտպանության միջոցներին (տես՝ կետ 75): Դրանց միացվում են նաև քրեաիրավական միջոցներին վերաբերող նախնական առարկությունները (տես՝ կետեր 98-107 և կետեր 111-114) :

3. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ

80. Դիմողը հայտարարել է, որ անվտանգության ուժերի անդամները 1993թ. հունվարի 15-ին փորձել են սպանել իրեն և հունիսի 14-ին սպանել են իր հորեղբորը՝ Հաշիմ Յաշային: Նա նաև բողոքել է, որ բավարար և արդյունավետ հետաքննություն չի իրականացվել իր վրա կատարված, հարձակման, ինչպես նաև իր հորեղբոր սպանության առիթով: Նա պնդում է, որ երկու դեպքում էլ՝ թե իր նկատմամբ կատարված հարձակման, թե իր հորեղբոր սպանության, եղել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում, որն անբազում է՝

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոք կանխամտածված ձևով չպետք է զրկվի կյանքից, բացառությամբ դատարանի դատավճռի կատարումից, որը հաջորդել է հանցագործության կատարման մեջ անձին մեղավոր ճանաչելուն, որի համար սահմանված է օրենքով նախատեսված պատիժ:

2. Կյանքից զրկելը չի կարող համարվել այս հոդվածի խախտում, երբ այն եղել է ծայրահեղ անհրաժեշտության արդյունք.

a. եղել է հակաօրինական բռնությունից պաշտպանվելու արդյունքում,

b. օրինական ձերբակալում իրականացնելիս օրինական կալանավորված անձի փախուստի ժամանակ,

с. ապստամբությունը կամ խռովությունը ճնշելու ժամանակ կիրառված օրինական գործողությունների արդյունքում»:

Ի պաշտպանություն իր հայտարարության՝ դիմողը ներկայացրել է Սուսուրլուքի գեկույցը (տես՝ կետ 46):

81. Կառավարությունը վիճարկել է այդ փաստարկը: Հանձնաժողովը նշել է, որ 2-րդ հոդվածը խախտվել է միայն այն մասով, որ դեպքի առիթով իշխանությունները չեն իրականացրել պատշաճ քրեական հետաքննություն:

A. Դատարանին ներկայացված փաստարկներ

1. Դիմողը

82. Դիմողը խնդրել է Դատարանին համաձայնել Հանձնաժողովի կարծիքին առ այն, որ եղել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում՝ այն իմաստով, որ վիճարկվող փաստերի կապակցությամբ չի իրականացվել պատշաճ և արդյունավետ հետաքննություն: Նա նաև Դատարանին խնդրել է ընդունել, որ իր վրա հարձակումը և իր հորեղբոր սպանությունն իրականացվել են պետական ծառայողների կողմից:

83. Այդ կապակցությամբ դիմողի փաստաբանը, հենվելով Կոնվենցիայի 28-րդ հոդվածի վրա, բողոքել է առ այն մասին, որ Կառավարությունը ժամանակին անհրաժեշտ տեղեկատվություն չի տրամադրել Հանձնաժողովին, ինչն ավելի կոյուրացներ ճշմարտության բացահայտումը: Մասնավորապես նրանք խնդրել են, որ Սուսուրլուքի գեկույցը (տես՝ կետ 46) ընդունվի դատավարության այս փուլում՝ որպես իրենց նախնական դիմումում ներկայացված գանգատները հիմնավորող ապացույց: Ըստ նրանց, այդ գեկույցը, որի կազմումը հանձնարարվել էր վարչապետի կողմից, և վարչապետը հաստատել էր դրա բովանդակությունը և արժանահավատությունը հեռուստատեսային հարցազրույցներում, առոչինչ է դարձնում Կառավարության փաստարկները: Չնայած այդ գեկույցը հնարավորություն չի տալիս բացահայտել հարձակման համար պատասխանատու անձանց, սակայն այն պարունակում է շատ լուրջ հաստատում, որ հարձակումները, որոնց համար ոչ ոք չի հայտարարվել պատասխանատու, և որոնք որակվել են որպես “faili mechul” (անհայտ կազմակերպիչներ), փաստորեն իրականում պատվիրվել են անվտանգության ուժերի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից: Այս տեղեկատվությունն ուղղակիորեն վերաբերում է սույն գործի ծագման պատճառ հանդիսացող իրադարձություններին: Քանի որ այն կասկածի տակ է դնում պետության այն հերքումը, թե Ozgur Gundem-ի նման թերթերի լրագրողների նկատմամբ հար-

ձակումներին և նրանց սպանություններին մասնակից է նաև պետական ապարատը, այն արժանահավատությունից զրկում է Կառավարության նախկինում արված հայտարարությունները և ներկայացրած ապացույցները: Մուսուլմանների զեկույցը ծայրաստիճան կարևորություն ունի այն հարցին պատասխանելու առումով, ինչը բաց էր մնացել Հանձնաժողովի զեկույցում (տես՝ կետ 34), թե արդյոք դիմողը և նրա հորեղբայրը պետության թողությունները իրականացված բռնությունների արշավի զոհ են եղել:

2. Կառավարությունը

84. Կառավարությունը պնդել է, որ դիմողի հայտարարություններն անհիմն են, և որ նրա կողմից ներկայացված փաստաթուղթը չի պարունակում ոչինչ, ըստ որի հնարավոր կլինի պարզաբանել, թե ինչպես կարող էին այդ իրադարձությունները վերագրվել անվտանգության ուժերին (տես՝ կետ 30): Դիմողի փաստաբանի կողմից ներկայացված միակ ապացույցը լրագրողների դեմ իրականացված բռնությունների ցանկն է, որը վերցված է թերթերի հրատարակումներից և որի աղբյուր են հանդիսանում նրանց հարող կազմակերպությունները:

85. Կառավարությունը նշել է, որ համաձայն է Հանձնաժողովի այն եզրակացությանը, որ այդ իրադարձությունները չեն կարող վերագրվել պետական ծառայողներին: Մյուս կողմից վիճարկել է, այն պատճառները, որոնց հիման վրա Հանձնաժողովը եզրակացրել է, որ չի կատարվել արդյունավետ հետաքննություն իրականացնելու պարտականությունը: Կառավարությունը նշել է, որ հետաքննությունը դեռևս շարունակվում է (տես կետ 29), նաև պնդել է, որ համապատասխան մարմինները ժամանակին են իրականացնում վիճարկվող իրադարձությունների քննությունը, սովորական պրակտիկային համապատասխան և բավարարու բնականոն ձևով, չնայած այն հանգամանքին, որ դիմողն իր բողոքները չի ներկայացրել որևէ ատյան՝ ո՛չ իր և ո՛չ էլ իր հորեղբոր անունից (տես՝ կետ 30):

Այդ կապակցությամբ Կառավարությունը նշել է, որ Հանձնաժողովը շրջահայացորեն չի կիրառել 2-րդ հոդվածը, լսողաց «ուսումնասիրելու, թե ինչ միջոցներ են կիրառվել ազգային իշխանությունների կողմից, որպեսզի կանխվեն անվտանգության ոտնահարումները, կամ ինչ իրավական և վարչական քննություններ են իրականացվել իրավախախտներին բացահայտելու համար, որոնք նրա [Կառավարության] կարծիքով եղել են պարզապես ահաբեկիչներ»: Հղում կատարելով Հանձնաժողովի նա-

խաղեպային իրավունքին (զանգատ թիվ 9360/81, 1983թ. փետրվարի 28-ի որոշում, Որոշումներ և գեկույցներ 32, էջ 211), Կառավարությունը նշել է, որ տվյալ դեպքում նույնպես պետք է կիրառվի այն սկզբունքը, որ 2-րդ հոդվածը չի կարող ենթադրել տեղի ունեցող ցանկացած բռնություն կանխելու դրական պարտավորություն:

86. Կառավարությունը նաև նշել է, որ Հանձնաժողովը պատշաճ ուշադրություն չի դարձրել այն փաստին, որ սույն գործով իրավասպահ մարմինները, հենց դեպքի օրը, իրենց նախաձեռնությամբ կատարել են քննչական գործողություններ, որպեսզի բացահայտեն հարձակվողներին: Չնայած հետաքննություններն արդյունք չեն տվել, քանի որ մեղավորները չեն հայտնաբերվել, բայց դա ինքնին չի կարող նշանակել, որ Թուրքիայի իշխանությունները ձգտել են պարտակել կամ աղավաղել փաստերը: Կառավարությունը նշել է, որ բոլոր եվրոպական երկրներում «լինում են սպանություններ կամ հարձակումներ, որոնք չեն բացահայտվում, մանավանդ երբ դրանում, ներգրավված են լինում ահաբեկիչներ կամ հանցավոր կազմակերպություններ»:

Այնուհետև, Կառավարությունը Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված իր պարտականության առնչությամբ ներկայացրել է այլընտրանքային տեսակետ, ըստ որի իշխանությունները չէին կարող անել ավելին, քանի որ տվյալ դեպքում իրադարձությունները եղել են «ահաբեկչության դեմ պայքարի ենթատեքստում, որի դեպքում հանցագործները շատ հազվադեպ են վերադառնում հանցագործության կատարման վայր: Նման հանգամանքներում ոստիկանությունը և դատական մարմիններն զգուշությամբ սահմանափակել են իրենց գործողությունները՝ սպասելով մինչև տարբեր հետաքննությունների արդյունքներ կհամադրվեն և կստուգվեն, ինչը հնարավորություն կտա բացահայտել նախկինում բռնի հանցագործություններ կատարած անձանց»:

87. Լսումների ժամանակ Կառավարության ներկայացուցիչը վիճարկել է Սուսուրլուքի գեկույցի ապացուցողական նշանակությունը: Չեկույցը ներկա դրությամբ չունի պաշտոնական կարգավիճակ: Ավելին, այն պատշաճ ապացույց չէ, քանի որ որևէ ուղղակի կապ չունի սույն գործի հետ: Դա պատրաստվել է միայն մեկ նպատակով, այն է՝ ստուգել որոշ հայտարարություններ, որպեսզի հետո իրականացվեն համապատասխան հետաքննություններ: Ուստի այդ գեկույցը որևէ դատական քննության արդյունք չի հանդիսանում:

Կառավարության ներկայացուցիչը նաև վիճարկել է Կոնվենցիայի 28-րդ հոդվածի հիմքով բերված փաստարկը, որը հիմնված է համագործակցության բացակայության վրա: Նա ասել է, որ ոչ մի փաստաթուղթ կամ ապացուցողական նյութ չի պարտակվել, և որ Հանձնաժողովի բոլոր հարցերին իրենք պատասխանել են Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության հիման վրա:

3. Հանձնաժողովը

88. Վկայակոչելով իր եզրակացությունները (տես՝ կետեր 32-45)՝ Հանձնաժողովը շեշտել է, որ դրանք կազմվել են գործի նյութերում եղած գրավոր փաստաթղթերի հիման վրա, մասնավորապես իրականացված ոստիկանական հետաքննությանը վերաբերող փաստաթղթերի, որոնք ներկայացվել են Կառավարության կողմից, և կուսակցությունների կողմից՝ ի պատասխան իր հարցման արված ուսումնասիրությունների հիման վրա: Սույն գործի հետ կապված նա նշել է, որ բոլոր հայտարարություններն այն մասին, որ քննարկվող դեպքերը տեղի են ունեցել որպես որոշակի թերթերի, ինչպես Ozgur Gundem-ն է, հետ կապված անձանց նկատմամբ հարձակումների արշավի բաղկացուցիչ մաս, եղել են կողմերի միջև բուռն բանավեճի առարկա առ այն, որ այդ հայտարարություններն այնքան լուրջ են, որ դժվար թե դրա հետ կապված փաստերը բացահայտվեն դրա հետ առնչություն ունեցած անձանց վկայություններով:

Հանձնաժողովը նշել է, որ այս գործից առաջ ընթացել են որոշ գործեր (գանգատներ թիվ 22492/93, 22496/93 և 25301/94), ինչպես, օրինակ, Ozgur Gundem- ի դեմ կիրառվող միջոցները, թերթի կամ դրա հրատարակման և առաքման հետ կապված անձանց վրա հարձակումները:

89. Չնայած իր լուրջ անհանգստությանն այն բացատրությունների առնչությամբ, որոնք դեռևս չեն ժխտվել Կառավարության կողմից, և վերաբերում են նման թերթերի առաքման և հրատարակման հետ կապված մի շարք անձանց վրա հարձակումներին և նրանց սպանություններին, Հանձնաժողովը եզրակացրել է, որ չի կարող առանց կասկածի կամ անվերապահորեն պնդել, որ անվտանգության ուժերը կամ ոստիկանության պաշտոնյաները ներգրավված են եղել դիմողի կամ նրա հորեղբոր նկատմամբ իրականացված հարձակումներին:

90. Այնուամենայնիվ, Հանձնաժողովը նշել է մի շարք գործոններ, որոնք նրան հիմք են տալիս համարելու, որ մասնավոր

հանգամանքները, որոնցում կատարվել են այս դեպքերը, պարտավորեցնում էին իշխանություններին իրականացնել պատշաճ և արդյունավետ հետաքննություն, որպեսզի պարզվի, թե արդյոք դիմողի և նրա հորեղբոր վրա կատարված հարձակումները կարող են կապված լինել անվտանգության ուժերի գործողությունների հետ: Այս կապակցությամբ Հանձնաժողովը նշել է, որ չնայած Կառավարությանն ուղղված իր առաջարկին, վերջինս չի բողոքել այդ հայտարարությունների ստահող բնույթի դեմ և հիմնականում՝ ապացույցների բացակայության դեմ, և ի վիճակի չի եղել ներկայացնել որևէ բավարարող տեղեկատվություն այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են դիմողի հայտարարությունների ճշմարտացիությունն ստուգելու ուղղությամբ (տես՝ կետ 45):

Այս պատճառով Հանձնաժողովը եզրակացրել է, որ եղել են հետաքննության թերացումներ, որոնք հանգեցրել են կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված պարտավորության խախտման (տես՝ Հանձնաժողովի գեկույցի 101-107 կետերը):

91. Լսումների ժամանակ Հանձնաժողովի պատվիրակը հայտնել է իր տեսակետը Սուսուրլուքի գեկույցի՝ որպես փաստերի պարզաբանման համար պատշաճ միջոցի, մասին: Նա նշել է, որ մինչ ինքը կասկածներ ուներ այն կշռի կապակցությամբ, որը Հանձնաժողովը տվել էր այդ փաստաթղթին, պարզվել է, որ այն նպաստում է այն մտայնությանը, որ Հարավարևելյան Թուրքիայում պետությունը մասնակցել է մարդու իրավունքների խախտման մի շարք լուրջ դեպքերի, որոնք որոշակի առումով համեմատելի են դիմողի և նրա հորեղբոր վրա կատարված հարձակումների հետ: Սակայն, կրկնելով, որ նման դեպքերում պետության պատասխանատվությունը կարող է միայն բխել փաստերից, որոնք առանց որևէ կասկածի ապացուցված են, պատվիրակը եզրակացրել է, որ Սուսուրլուքի գեկույցը բավարար հիմք չի ապահովում այդ կասկածները մերժելու համար, և Դատարանին խնդրել է ընդունել, որ Հանձնաժողովի հայտնաբերած փաստերը համապատասխանում են իրականությանը:

B. Դատարանի գնահատականը

1. Դիմողի և նրա հորեղբոր դեմ կատարված հարձակումները

92. Դատարանը գտնում է, որ ո՛չ դիմողի փաստաբանը, ո՛չ Կառավարությունը չեն վիճարկում Հանձնաժողովի կողմից ներ-

կայացված որևէ փաստական նյութ: Մյուս կողմից, Դատարանի առջև հանդես գալով՝ նրանք միանշանակ համաձայն չեն այդ փաստերի հիմքի վրա արված եզրակացությանը՝ կապված Կոնվենցիայի 2-րդ հոդվածի հետ:

93. Կարևոր է հիշել այն, որ Կոնվենցիայի՝ համակարգում փաստերի հաստատումը և ստուգումը հիմնականում Հանձնաժողովի իրավասությունն է (տես՝ Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 1-ին կետը և 31-րդ հոդվածը): Միայն բացառիկ դեպքերում է Դատարանն իրականացնում իր սեփական լիազորություններն այս կապակցությամբ: Սակայն Դատարանը կաշկանդված չէ Հանձնաժողովի փաստական բացահայտումներով և ազատ է տալու իր սեփական գնահատականը՝ բոլոր նյութերի ուսումնասիրությունից ելնելով (տես՝ Մաք Զենտը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1995թ. սեպտեմբերի 27-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 324, էջ 50, կետ 169, և վերը հիշատակված Ղայայի վճիռը, էջ 321, կետ 75):

Սույն դեպքում Հանձնաժողովն ի վիճակի չի եղել եզրակացնել, որ այն հայտարարությունը, որ հարձակումները նախապատրաստվել են անվտանգության ուժերի կողմից, ապացուցված է առանց որևէ կասկածի (տես՝ Այդինն ընդդեմ Թուրքիայի գործով 1997թ. սեպտեմբերի 25-ի վճիռը, Չեկոյցներ 1997-4, էջ 1889, կետ 72, և վերը հիշատակված Ղայայի վճիռը, էջ 322, կետ 76): Սակայն դիմողը Դատարանին խնդրել է հաշվի առնել, որ նոր ապացույցը, որ նախկինում չի ներկայացվել Հանձնաժողովին, խոսում է ի պաշտպանություն իր ներկայացրած վարկածի (տես՝ կետ 83): Այդ կապակցությամբ նա վկայակոչել է Սուսուրլուքի զեկույցը (տես՝ կետ 46), որի ապացուցողական նշանակությունը լսումների ժամանակ լրջորեն վիճարկվում էր Կառավարության կողմից (տես՝ կետ 87):

94. Դատարանը կրկնել է, որպեսզի բացահայտվի, թե արդյոք էական հիմքեր կան հավաստելու, որ պատասխանող պետությունը չի կատարել Կոնվենցիայով նախատեսված իր պարտականությունները, Դատարանը պետք է ստուգի իրեն ներկայացված բոլոր հարցերը՝ իր առջև հանդես եկածների ներկայացրած ողջ նյութերի համատեքստում, և եթե անհրաժեշտ է՝ ստուգի նաև *proprio motu* ձեռք բերված նյութերը (տես՝ *mutatis mutandis*, Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1978թ. հունվարի 18-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 25, էջ 64, կետ 160, և Քրուզ Վարասնը և այլոք ընդդեմ Շվեդիայի գործով 1991թ. մարտի 20-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 201, էջ 29, կետ 75): Չնայած Դատարա-

նը պետք է նախ և առաջ հիմք ընդունի տվյալ դեպքի ժամանակ եղած հանգամանքները, չի բացառվում, որ նա հաշվի առնի հետազայում բացահայտված տեղեկատվությունը (տես՝ mutatis mutadis, Քրուզ Վարասն և այլոք վերը հիշատակված վճիռը, էջ 30, կետ 76):

95. Դատարանը նշել է, որ Սուսուրլուքի զեկույցը, որը կազմվել է վարչապետի պահանջով, կապված է մի շարք անհանգստացուցիչ իրադարձությունների հետ, որոնք կատարվել են Թուրքիայի հարավարևելյան շրջաններում (տես՝ կետ 46): Որոշ հրատարակչական ընկերությունների ճակատագիրը, մասնավորապես Ozgur Gundem թերթը հրատարակող ընկերության, անհազանգող է այս կապակցությամբ: Համաձայն զեկույցի հեղինակի՝ այս իրավիճակի հիմնական պատճառը, ինչն զգալիորեն ալեկոծել է հասարակական կարծիքը, քրդական հիմնախնդիրն է և այն միջոցները, որոնք կիրառվում են PKK-ի (ԶԲԿ) դեմ այդ տարածաշրջանում պայքարելու համար:

96. Մակայն ճիշտ է, որ պահանջվող աստիճանի ապացուցողական նշանակության ձեռքբերումը (տես՝ կետեր 34 և 91) կարող է բխել բավարար համոզիչ, հստակ և համահունչ մտահանգումների կամ անառարկելի կանխավարկածների համադրումից (տես՝ Այդինի վերը հիշատակված վճիռը, էջ 1888, կետ 70 և Ղայայի վերը հիշատակված վճիռը, էջ 322, կետ 77), դրանց ապացուցողական նշանակությունը պետք է հաշվի առնվի կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո և պատասխանող պետությանը ներկայացված մեղադրանքի լրջությունից և բնույթից ելնելով:

Սույն դեպքում Դատարանը գտնում է, որ չնայած այն լուրջ անհանգստությանը, որ առաջացնում է Սուսուրլուքի զեկույցը, այն չի պարունակում նյութեր, որոնք հնարավորություն կտան բավարար ճշգրտությամբ բացահայտել դիմողի և նրա հորեղբոր վրա հարձակում իրականացրած անձանց:

97. Հետևաբար, Դատարանը չի գտնում, որ ինքը կարող է շեղվել Հանձնաժողովի եզրակացություններից՝ այս գանգատի մասով: Ուստի նա գտնում է, որ գործում առկա նյութերը թույլ չեն տալիս առանց որևէ կասկածի եզրակացնել, որ պարոն Էշրեֆ Յաշան հարձակման է ենթարկվել և նրա հորեղբայրը սպանվել է անվտանգության ուժերի կողմից:

Դրանից բխում է, որ այս կապակցությամբ 2-րդ հոդվածի խախտում չի եղել:

2. Հետաքննության վիճարկվող անպատշաճությունը

98. Գատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքի պաշտպանության պարտականությունը մեկնաբանելով Կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված «[իր] իրավագործության տակ գտնվող յուրաքանչյուրի՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների ապահովման»՝ պետության հիմնական պարտավորության համատեքստում, պահանջում է, որ լինի որոշակի արդյունավետ պաշտոնական հետաքննություն, երբ բռնության արդյունքում մարդ է սպանվում (տես՝ *mutatis mutandis*, Մաք Զեմի և այլոց վերը հիշատակված վճիռը, էջ 48, կետ 161, և Ղայայի վերը հիշատակված վճիռը, էջ 324, կետ 86):

99. Մույն գործում Կառավարությունը պնդում է, որ չկան ապացույցներ առ այն, որ պետության պաշտոնյաները մասնակցել են վիճարկվող գործողությունների իրականացմանը (տես՝ կետ 84): Ավելին, դիմողն այս կապակցությամբ, որևէ ատյանում ակնհայտ մեղադրանքներ չի ներկայացրել ոչ իր և ոչ էլ իր հորեղբոր անունից (տես՝ կետեր 67 և 76):

100. Այդ կապակցությամբ Գատարանը շեշտել է, որ, ի հակառակն Կառավարության պնդումների, պարտավորությունը չի սահմանափակվում այն դեպքերով, երբ ապացուցվում է, որ սպանությունը կատարել է պետական պաշտոնյան: Վճռորոշ չէ նաև այն հարցը, թե արդյոք սպանվածի ընտանիքի անդամները կամ այլ անձինք սպանության առթիվ պաշտոնական դիմումներ ներկայացրել են իրավասու քննչական մարմիններին: Մույն գործում հիմնական փաստն այն է, որ իշխանությունները տեղյակ են եղել դիմողի հորեղբոր սպանության մասին, որը *ipso facto* առաջ էր բերում Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը (տես՝ *mutatis mutandis*, Էրզին ընդդեմ Թուրքիայի գործով 1998թ. հուլիսի 28-ի վճիռը, Չեկույցներ 1998-4, էջ 1778, կետ 82): Նույնը վերաբերում է նաև դիմողի վրա կատարված հարձակմանը, որը, նրա վրա արձակված ութ կրակոցների հետևանքով, որակվում է որպես սպանության փորձ (տես՝ կետ 36):

101. Մույն գործում, չի վիճարկվում, թե դեպքերից հետո ինչ քայլեր են ձեռնարկել նախնական քննության համար պատասխանատու մարմինները և իրավասու դատախազությունը (տես՝ կետեր 35-45):

Դիմողի վրա հարձակումից հետո ոստիկանական հետաքննությունն սկսվել է հենց նույն օրը՝ 1993թ. հունվարի 15-ին: Այդ նախնական փուլի ավարտին, որը տևել է միայն երկու օր, Մարդիվնաքափի անվտանգության տնօրինությունը 1993թ. հունվարի

17-ի իր զեկույցում եզրակացրել է, որ հնարավոր չի եղել գտնել հարձակման պատասխանատուներին կամ նույնիսկ բացահայտել նրանց: Դրանից հետո, հունվարի 20-ին, Դիարբեքիի դատախազը ցուցում է տվել տնօրինությանը անցկացնել հետաքննություն և ձերբակալել կասկածվող անձանց, կամ եթե ի վիճակի չէ անելու դա, յուրաքանչյուր երեք ամիսը մեկ դատախազությանը տեղյակ պահել գործի ընթացքի մասին: Ապրիլի 14-ին դատախազը երկրորդ անգամ տվել է այդ ցուցումները՝ կրկնելով իր պահանջը՝ երեք ամիսը մեկ տեղեկացնելու ոստիկանական հետաքննության ընթացքի մասին, մինչև որ հանցագործության համար հետապնդումը դառնա անիմաստ: Համաձայն ցուցումներում արված նշումի՝ դա պետք է լիներ 1998թ. հունվարի 18-ին (տես կետ 39): Կոնվենցիայի հաստատություններին, սակայն, Կառավարությունը չի ներկայացրել այդ եռամսյակային զեկույցները, որոնք ոստիկանությանը հանձնարարվել են պատրաստել (տես՝ կետ 45):

Հաշիմ Յաշայի սպանության կապակցությամբ նախնական քննությունը նույնպես սկսվել է հենց այդ իրադարձության օրը, այսինքն՝ 1993թ. հունիսի 14-ին: Հունիսի 21-ի դրությամբ իշխանություններն այլ գործողությունների հետ մեկտեղ իրականացրել էին դիագնոստիկ, ստացել էին դատաձգաբանական փորձագետի եզրակացությունը և հարցաքննել էին երեք վկաների, ներառյալ սպանվածի որդուն: Դատարանն այս հետաքննության հետագա զարգացումների մասին տեղեկություն չունի (ibid):

102. Մինչդեռ, Կառավարությունը տեղյակ է եղել պարոն Յաշայի դիմումի մասին 1993թ. հոկտեմբերի 11-ի դրությամբ (տես՝ Հանձնաժողովի զեկույցի 6-րդ կետը), և Հանձնաժողովն առաջարկել է Կառավարությանն ավելի ստույգ մանրամասներ հայտնել այն հետաքննական միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են դիմողի, նրա հորեղբոր և որոշ արմատական պարբերականների հետ կապ ունեցող մարդկանց նկատմամբ իրականացված հարձակումներից հետո (տես՝ կետեր 34 և 90):

103. Չնայած այդ պահանջներին, Կառավարությունը չի տրամադրել կոնկրետ տեղեկատվություն հետաքննությունների ընթացքի և վիճակի մասին (տես՝ կետ 90, և Հանձնաժողովի զեկույցի կետ 105), որոնք դեպքերից ավելի քան հինգ տարի հետո դեռևս չէին ապահովել որևէ շոշափելի արդյունք: Ընդհանուր առմամբ, Կառավարությունը նշել է, որ հետաքննությունները դեռևս ընթացքի մեջ են, բայց չի ներկայացրել որևէ փաստ, որը ցույց կտա, որ դրանցում ըստ էության որևէ առաջընթաց է նկատվում (տես՝ կետեր 29, 35-45 և 86): Այս կապակցությամբ, վերջին հե-

տաքննական գործողությունը, որի մասին Դատարանը տեղյակ է, կատարվել է 1993թ. հունիսի 21-ին, երբ Հաշիմ Յաշայի սպանության կապակցությամբ կազմվել է դատաձգաբանական փորձագետի եզրակացությունը (տես՝ կետ 44), մինչդեռ Դիարբեքիի դատախազը 1993թ. ապրիլի 14-ին ոստիկանությունից պահանջել էր յուրաքանչյուր երեք ամիսը մեկ իրեն տեղյակ պահել հետաքննության ընթացքի մասին (տես՝ կետ 101): Միակ բացատրությունը, որը տրվել է Կառավարության կողմից, այն է, որ հետաքննություններն իրականացվում էին ահաբեկչության դեմ պայքարի ենթատեքստում, և որ նման հանգամանքներում ոստիկանությունը և մյուս իրավապահ մարմինները սահմանափակում էին իրենց գործողությունները, «որպեսզի գործեն զգուշությամբ և սպասեն մինչև այլ բազմապիսի հետաքննությունների արդյունքների համադրումը, որը հնարավորություն կտա բացահայտել նախկինում կատարված հանցագործությունների, ինչպես նաև բռնությունների կազմակերպիչներին» (տես՝ կետ 88):

104. Դատարանը պատրաստ է հաշվի առնելու այն փաստը, որ այդ ժամանակ Թուրքիայի այդ տարածաշրջանում գերակշռող մթնոլորտը, որը ընդգծվում էր PKK-ի (ԶԲԿ) կողմից արված բռնության գոյծողությամբ, և իշխանությունների՝ ի պատասխան ձեռնարկած միջոցառումներով, կարող էր խոչընդոտել վերջնական ապացույցների բացահայտմանը ներպետական քրեական վարույթներում իրականացմամբ: Այնուամենայնիվ, նման բնույթի հանգամանքները չեն կարող իշխանություններին ազատել 2-րդ հոդվածով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումից, այլապես դա ավելի կսրի անպատժելիության և անապահովության մթնոլորտն այդ շրջանում, ինչը կստեղծի բացասական շրջադարձ (տես՝ *mutatis mutandis*, Ղաշայի վերը հիշատակված վճիռը, էջ 326, կետ 91):

105. Բացի դրանից, Դատարանը ցնցված էր այն փաստից, որ հետաքննական մարմիններն ի սկզբանե բացառել են այն հնարավորությունը, որ այդ հարձակումներին կարող էին մասնակից լինել պետական ծառայողներն: Այսպիսով, դատախազը Դիարբեքիի Ազգային անվտանգության դատարանում համարել է, որ քննարկվող դեպքերը պարզապես «եղել են զինված կազմավորումների միջև հաշիվների մաքրում» (տես՝ կետ 45 և Հանձնաժողովի զեկույցի կետ 61), մինչդեռ Կառավարությունը գտնում է, որ այդ հարձակումների ամբողջ պատասխանատվությունն ընկած է ահաբեկիչների վրա, չնայած, որ հետաքննությունը նույնիսկ ավարտված չէ և չկան կոնկրետ ապացույց-

ներ, որոնցով կլինի հաստատել, որ դա Դատարանի ուշադրությանը ներկայացնելու համար բավականաչափ արժանահավատ վարկած է:

106. Այս մտտեցումը պետք է գնահատվի այն փաստի լույսի ներքո, որ Հանձնաժողովը բացահայտել է, որ Հարավարևելյան Թուրքիայում եղել են մի շարք հարձակումներ, ներառյալ սպանություններ, ընդդեմ Ozgur Gundem-ի լրագրողների, թերթի կրպակների և առաքողների, և որ նույնիսկ այդպիսի որոշ իրադարձություններ եղել են Հանձնաժողովին ուղղված գանգատների առարկա (թիվ 22492/93, 22496/93, 23144/93 և 25301/94, տես՝ Հանձնաժողովի գեկույցի կետեր 52-59): Կառավարությունը չի վիճարկում այն հանգամանքը, որ հարձակումներ տեղի են ունեցել, և որ դրանք լուրջ բնույթ են կրել: Հանձնաժողովը նաև նշել է, որ շատ բողոքներ և պաշտպանության խնդրանքներ են ուղղվել իշխանություններին լրագրող պրն. Յ. Ղարայի կողմից, որն այդ ժամանակ թերթի սեփականատերն էր:

Գործի բոլոր փաստերը հաշվի առնելով, Հանձնաժողովը չի կարծում, որ այս գործով «իշխանություններն անտեղյակ (էին) կամ (կարող էին) անտեղյակ լինել, որ Ozgur Gundem-ի հրատարակման և առաքման գործում ներգրավված մարդիկ վախենում են, որ իրենք զոհ կդառնան այն կանխամտածված արշավին, որը, եթե ոչ հաստատվում, ապա հանդուրժում են պետական պաշտոնյաները» (տես՝ կետեր 34 և 89):

Տալով իր սեփական գնահատականը գործի այս ասպեկտի կապակցությամբ, մասնավորապես Մուսուրլուքի գեկույցում առկա բացահայտումների լույսի ներքո (տես՝ կետ 46), Դատարանը գտնում է, որ ուսումնասիրությունը լավ հիմնավորված է: Մույն գործում, այնուամենայնիվ, իշխանություններն իրենց հետաքննություններում պետք է հաշվի առնեին այն փաստը, որ պետական ծառայողները կարող էին մասնակից լինել հարձակումներին: Այդ կապակցությամբ, անկախ այն բանից, թե դիմողը պաշտոնապես ձևով մեղադրում է անվտանգության ուժերին հարձակումների մասնակից լինելու մեջ թե՛ ոչ , դա այնքան էլ եական չէ (տես՝ կետեր 30, 37, 76 և 85):

107. Համառոտ, քանի որ սույն գործով իրականացված հետաքննությունները թույլ չեն տալիս հավաստել գործի հանգամանքներից բխող այն հնարավորությունը, որ անվտանգության ուժերը կարող էին ներգրավված լինել հարձակումներին, և քանի որ մինչև այժմ, դեպքից ավելի քան հինգ տարի անց, ոչ մի կոնկրետ և արժանահավատ առաջընթաց տեղի չի ունեցել, հետաքն-

նությունները չեն կարող համարվել արդյունավետ, ինչպես պահանջվում է 2-րդ հոդվածով:

108. Հետևաբար, դիմողն իրականացրել է ներպետական պաշտպանության միջոցներն սպառելու պարտականությունը: Դրանից հետևում է, որ Դատարանը մերժում է Կառավարության նախնական առարկությունները քրեադատավարական միջոցառումների իրականացման առնչությամբ, և արձանագրում, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի խախտում:

4. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-րդ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄ

109. Դիմողը բողոքել է, որ ինքը չի ունեցել արդյունավետ պաշտպանության միջոց Կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով, որը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ոք, ում՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքները և պարտականությունները ոտնահարվել են, պետք արդյունավետ միջոց ունենա ազգային իշխանությանը դիմելու համար, անկախ այն բանից, որ այդ խախտումն իրականացվել է պաշտոնական լիազորություններ իրականացնող անձի կողմից»:

Կառավարությունը վիճարկել է այդ փաստարկը: Հանձնաժողովը գտել է, որ կարիք չկա այն առանձին ուսումնասիրելու, բանի որ 13-րդ հոդվածի մասով առանձին հարց չի ծագել:

A. Կողմերի փաստարկները

110. Դիմողը, որը չի համաձայնել Հանձնաժողովի եզրակացությանը, ներկայացրել է, որ անկախ քննությունը, որն իրականացվել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի հիմքով, գնահատվել է՝ այս բողոքի հետ կապված: Նա պնդել է, որ օրենսդրական դաշտը և պրակտիկան Հարավարևելյան Թուրքիայում, որը գտնվում է արտակարգ դրության մեջ, դիտավորյալ կերպով փոխվել է այնպես, որպեսզի ընդդեմ պետության պաշտպանության միջոցների իրականացումն ավելի դժվարանա: Այդ տարածաշրջանում գործող հատուկ օրենսդրությունն ստեղծում է մի համակարգ, որն ապահովում է անվտանգության ուժերի անպատժելիություն, ինչը հիմնված է իշխանությունների այն մարտավարության վրա, որը մերժում է փաստերը և իր որևէ պատասխանատվությունը, որպեսզի կանխի ներպետական միջոցներից արդյունավետորեն օգտվելը:

111. Հղում կատարելով ներպետական միջոցների սպառման վերաբերյալ բացատրություններին (տես՝ կետ 67)՝ Կառավարությունը սահմանափակվել է ասելով, որ դիմողը չի կարող բողոքել 13-րդ հոդվածի խախտման հիմքով:

Ե. Դատարանի գնահատականը

112. Դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է Կոնվենցիայով նախատեսված իրավունքները և ազատությունները ներպետական մակարդակով պաշտպանելու համար միջոցների մատչելիությունը, ինչպես ապահովված է ներպետական իրավական համակարգում: Այս նպատակով այդ հոդվածը պահանջում է ներպետական միջոցների նախատեսում, որը հնարավորություն կտա իրավասու ներպետական մարմնին ըստ էության քննության առնել Կոնվենցիայի հիման վրա ներկայացվող «վիճելի գանգատը» և պատշաճորեն վերականգնել խախտված իրավունքը, թեև Պայմանավորվող պետություններին տրամադրված է հայեցողության որոշակի շրջանակ՝ այս դրույթով նախատեսված իրենց պարտավորությունը կատարելու ձևերի ընտրության հարցում: Այնուամենայնիվ, 13-րդ հոդվածով պահանջվող պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ»՝ ինչպես գործնականում, այնպես էլ տեսականորեն, այն իմաստով, որ մասնավորապես դրա իրականացումը չպետք է անհիմն կերպով խոչընդոտվի պատասխանող պետության գործողություններով և բացթողումներով (տես՝ Ասքոյի վերը հիշատակված վճիռը, էջ 2286, կետ 955, Այդինի վերը հիշատակված վճիռը, էջ 1895, կետ 103, և Ղայայի վերը հիշատակված վճիռը, էջեր 329-330, կետ 106):

113. Մույն գործում Դատարանը եզրակացրել է, որ ողջամիտ կասկածից վեր չի ապացուցվել, որ դիմողի և նրա հորեղբոր վրա կատարված հարձակումներն իրականացվել են պետական ծառայողների կողմից (տես՝ կետ 97): Այդ փաստը, սակայն, անհրաժեշտորեն չի նշանակում, որ 2-րդ հոդվածի հիմքով բերված գանգատը վիճարկելի չէ (տես՝ Բոյլը և Ռայսն ընդդեմ Սիացյալ Թագավորության գործով 1988թ. ապրիլի 27-ի վճիռը, Շարքեր A թիվ 131, էջ 23, կետ 52, և Ղայայի վերը հիշատակված վճիռը, էջեր 330-331, կետ 107): Դատարանի եզրակացությունն այն էր որ այդ գնահատականը չի ազատում պետությանը գանգատի ըստ էության արդյունավետ հետաքննություն իրականացնելու պարտականությունից, ինչը վերը նշված պատճառներով (տես՝ կետ 106) վիճարկելի էր:

114. Անհրաժեշտ է նաև կրկնել, որ վիճարկվող խախտված իրավունքի բնույթը կախված է 13-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների ծավալից: Ելնելով կյանքի պաշտպանության իրավունքի հիմնարար կարևորությունից, 13-րդ հոդվածը պարտադրում է պետությանը, առանց խոչընդոտելու ներպետական համակարգում գործող որևէ պաշտպանության միջոցի, ներառյալ՝ համապատասխան դեպքերում վնասի հատուցման վճարումը, իրականացնել մանրամասն և արդյունավետ քննություն, ինչն ի վիճակի կլինի հանգեցնել պատասխանատու անձանց բացահայտմանը և պատժելուն, որում արդյունավետ մասնակցություն կունենա նաև դիմողը (տես՝ *mutatis mutandis*, Ղայա Աքսոյի և Այդինի վերը հիշատակված վճիռները համապատասխանաբար կետեր 107, 108 և 103):

115. Դատարանը կրկնում է, որ իշխանությունները պարտավոր էին իրականացնել արդյունավետ հետաքննություն (տես՝ կետ 107) հարձակումների հանգամանքների կապակցությամբ: Սակայն, այդ հարձակումների իրականացումից հինգ տարի անց, հետաքննությունը դեռևս ցույց չի տվել որևէ արդյունք: Վերը նշված պատճառներով (տես՝ կետեր 98-108) պատասխանող պետությունը չի կարող համարվել արդյունավետ քրեական հետապնդում իրականացրած, ինչպես սահմանվում է 13-րդ հոդվածով, որի պահանջները թերևս ավելի խիստ են, քան 2-րդ հոդվածով նախատեսված հետաքննություն իրականացնելու պարտականությունը (տես՝ Ղայայի վերը նշված վճիռը, էջեր 330-331, կետ 107, և տես՝ սույն վճռի կետեր 98, 112 և 114):

Հետևաբար, տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում:

5. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՆՎԵՆՑԻԱՑԻ 2-ՐԴ և 13-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԻՃԱՐԿՎՈՂ ՊՐԱԿՏԻԿԱՆ

116. Վկայակոչելով, մասնավորապես, Սուսուրլուքի զեկույցը, դիմողը պնդել է, որ Թուրքիայում գոյություն ունի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը և 13-րդ հոդվածը խախտող պաշտոնապես հանդուրժվող պրակտիկա, ինչն ավելի է խստացնում այն օրինախախտումները, որի գոհերն են եղել ինքը և իր հորեղբայրը:

Հարավարևելյան Թուրքիայում քրեադատավարական միջոցառումները վիճակված են ձախողման և ի վիճակի չեն կանխելու հակաօրինական գործողությունները և իշխանության չարաչափումները: Պարբերաբար մերժելով Կոնվենցիայի ցանկացած

խախտում, իշխանություններն ապահով էին իրենց դեմ հարուցված վարույթներից:

117. Դատարանը գտնում է, որ գործում առկա նյութերը բավարար չեն հաստատելու, թե արդյոք իշխանությունները որդեգրել են դիմողի կողմից նշված՝ Կոնվենցիայի որևէ հոդվածի խախտման պրակտիկա:

6. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10,14 և 18-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄ

118. Հենվելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վրա՝ դիմողը պնդել է, որ իր և իր հորեղբոր վրա կատարված հարձակումները պարունակում են իրենց՝ խոսքի ազատության իրավունքի լուրջ խախտում, քանի որ նրանք վաճառում էին Ozgur Gundem-ը, և այդ հարձակումները եղել են պետության կողմից հանդուրժվող բռնությունների արշավի մասը: Նա նաև նշել է, որ և՛ իր, և՛ իր հորեղբոր դեպքերում եղել է 14-րդ հոդվածի խախտում՝ 2, 10 և 13-րդ հոդվածների խախտումների հետ մեկտեղ. այդ խախտումն արտահայտվել է էթնիկական պատկանելությամբ և քաղաքական հայացքներով պայմանավորված խտրականությամբ: Վերջում դիմողը բողոքել է 18-րդ հոդվածի խախտման կապակցությամբ՝ այն հիմքով, որ գործով բացահայտվել են պետության կողմից իշխանության չարաշահումների հստակ դեպքեր:

119. Կառավարությունը վիճարկել է դիմողի փաստարկները: Հանձնաժողովը եզրակացրել է, որ չի եղել 10-րդ հոդվածի խախտում, և 14-րդ ու 18-րդ հոդվածների հիմքով բերված գանգատները համարել է չհիմնավորված:

120. Դատարանը նշել է, որ այդ գանգատները բխում են այն նույն փաստերից, որոնք հաշվի են առնվել 2-րդ և 13-րդ հոդվածների պարագայում: Այդ հոդվածների կապակցությամբ իր եզրակացության լույսի ներքո (տես՝ կետեր 107 և 115), Դատարանն անհրաժեշտ չի համարել այդ բողոքներն առանձին քննել:

7. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

121. Դիմողը պահանջում էր արդարացի բավարարում՝ Կոնվենցիայի 50-րդ հոդվածի հիման վրա, որը նախատեսում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ պայմանագրի կողմի օրինական կամ այլ իշխանության կողմից ընդունված որոշումը կամ կիրառված միջոցն ամբողջապես կամ մասնակի հակասում է

Կոնվենցիայով նախատեսված նրա պարտականություններին, և եթե այդ կողմի ներպետական օրենսդրությունը հնարավորություն է տալիս այդ որոշման կամ միջոցի կիրառման հետևանքով ստանալ միայն մասնակի փոխհատուցում, Դատարանն անհրաժեշտության դեպքում կարող է պատշաճ բավարարում տալ տուժած կողմին»:

Կառավարությունը վիճարկել է դիմողի պահանջները մի քանի առումներով: Հանձնաժողովի պատվիրակը չուներ որևէ հատուկ մեկնաբանություն:

A. Նյութական և ոչ նյութական վնաս

122. Դիմողը խնդրել է Դատարանին իրեն հատկացնել, ամբողջությամբ վերցրած 54,000 գերմանական մարկ՝ որպես դրամական հատուցում, որից 4000 մարկ հիվանդանոցում իր բուժման համար և 50,000 իր վրա կատարած հարձակման արդյունքում իր կորցրած վաստակի համար: Նա նաև խնդրել է իր հորեղբայր Հաշիմ Յաշայի ընտանիքին հատկացնել 50,000 մարկ՝ կորցրած վաստակի և նրա մահվան հետ կապված ծախսերի համար:

Դիմողը նաև պահանջել է ընդամենը 150,000 ֆունտ ստեռլինգի չափով գումար ոչ նյութական վնասի հատուցում, որը նա բացատրել է հետևյալ կերպ՝

1. 70,000 ֆունտ ստեռլինգ, որից որպես հարձակման հետևանքով կրած վնասների հատուցում (50,000 ֆունտ ստեռլինգ), որպես իր կյանքի իրավունքի պաշտպանության խախտման հատուցում (10,000 ֆունտ ստեռլինգ), որպես ներպետական արդյունավետ միջոց չապահովելու հատուցում (10,000 ֆունտ ստեռլինգ):

2. 70,000 ֆունտ ստեռլինգ գոհվածի ընտանիքի համար՝ գոհվածի սպանության կապակցությամբ (50,000 ֆունտ ստեռլինգ), նրա կյանքի իրավունքը չպաշտպանելու հատուցում (10,000 ֆունտ ստեռլինգ), արդյունավետ միջոցի բացակայության հատուցում (10,000 ֆունտ ստեռլինգ):

3. 10,000 ֆունտ ստեռլինգ իր գոհվածի համար՝ որպես Կոնվենցիայի 13 հոդվածի խախտումների պրակտիկայի գոհեր:

123. Որպես իր հիմնական պնդում՝ Կառավարությունը նշել է, որ տվյալ գործով ոչ մի հատուցման անհրաժեշտություն չկա: Փոխարենը նա Դատարանին խնդրել է չընդունել հատուցման մասին դիմողի խնդրանքը՝ որպես անհամաչափ և չարդարացված: Ինչ վերաբերում է ոչ նյութական հատուցմանը, Կառավարությունը նախ վիճարկել է այն, որ դիմողի պահանջը պետք է

մասնատված լինի: Կառավարությունը նաև նշել է, որ պատճառական կապ չկա դիմողի գանգառի և ներկայացված վնասների միջև: Կառավարությունը հաստատապես հակադրվել է նրան, որ սպանվածի ընտանիքին պետք է հատկացվի հատուցում՝ այն պատճառաբանությամբ, որ ևս չի մասնակցել Ստրասբուրգի հաստատություններում ընթացող դատավարություններին:

Ընդհանուր առմամբ, Կառավարությունը նշել է, որ գումարները պետք է պահանջվեն առանց հաշվի առնելու Հարավարևելյան Թուրքիայի սոցիալական դրությունը կամ երկրում առկա նվազագույն աշխատավարձի մակարդակը: Այդ կապակցությամբ Կառավարությունը նշել է, որ ոչ նյութական վնասի համար հատուցումն իրենից չպետք է ներկայացնի հարստանալու աղբյուր:

124. Դատարանը նկատում է, որ հաստատված չէ այն հանգամանքը, որ դիմողը հարձակման է ենթարկվել և նրա հորեղբայրն սպանվել է անվտանգության ուժերի անդամների կողմից (տես՝ կետ 97): Այդ պատճառով դա չի կարող ընդգրկվել նյութական և ոչ նյութական վնասների հատուցման պահանջների մեջ: Բացի դրանից, քանի որ չի հաստատվել, որ եղել է Կոնվենցիայի խախտման պրակտիկա (տես՝ կետ 117), որևէ հատուցում չի կարող տրվել նաև այդ առումով:

Ինչպես Կառավարությունը, Դատարանը նույնպես կարծում է, որ գանգառը ներկայացվել է միայն Հաշիմ Յաշայի գարմիկի կողմից (տես՝ կետ 63):

Այս հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ միայն պարոն Էշրեֆ Յաշան կարող է արդարացի բավարարում ստանալ ոչ նյութական վնասի համար, որը նա կրել է Կոնվենցիայի 2-րդ և 13-րդ հոդվածների խախտման արդյունքում (տես՝ կետեր 107 և 115): Առաջնորդվելով արդարության սկզբունքով, Դատարանը որոշել է դիմողին հատկացնել 6,000 ֆունտ ստեռլինգ գումար, որը կփոխանակվի թուրքական լիրայի՝ վճարման օրը գործող փոխարժեքային կուրսով:

B. Ծախսեր և ծախսեր

125. Դիմողը պահանջել է 16,426,42 ֆունտ ստեռլինգ՝ ի հատուցում այն ծախսերի և ծախսերի, որոնք նա կրել է կոնվենցիոն հաստատություններում այս գործը ներկայացնելու և նախապատրաստելու համար: Ծախսերի իր ցանկում, նա որպես իրավաբանական օգնություն Եվրոպայի խորհրդի կողմից տրամադրված գումարները հանելուց հետո, իր պահանջը ձևակերպել է հետևյալ կերպ՝

1. բրիտանացի ներկայացուցիչների վարձատրություն՝ 13,190,70 GBP
2. թուրք իրավաբանների վարձատրություն՝ 725,00 GBP
3. տարբեր վարչական ծախսեր՝ 985,72 GBP
4. Թուրքիայում կրած վարչական ծախսեր՝ 250 GBP
5. մեկնաբանությունների և քարգմանությունների ծախսեր՝ 1,440,00 GBP:

Դիմողի փաստաբանը խնդրել է, որ իրենց ծախսերի և ծախսերի հատուցմանն ուղղված ցանկացած գումար փոխանցվի Միացյալ Թագավորությունում գտնվող իրենց բանկային հաշվին:

126. Կառավարությունն ընդդիմացել է նրան, որ արտասահմանյան իրավաբաններ վարձելու փաստի հետևանքով կրած ծախսերը նույնպես արտացոլված են, քանի որ դրա միակ արդյունքը եղել է գործի հետևանքում կրած ծախսերի ուռճացումը: Բացի դրանից պահանջվող ծախսերի և ծախսերի գումարը չափազանց մեծ է և չունի որևէ փաստաթղթային ապացույց:

127. Դատարանը նշել է, քանի որ դիմողն ազատ է իր իրավաբան ներկայացուցիչներին ընտրելու հարցում, պարոն Յաշայի կողմից Միացյալ Թագավորության քաղաքացի հանդիսացող իրավաբանների օգնությանը դիմելը, որոնք մասնագիտացած են մարդու իրավունքների միջազգային պաշտպանության գործում, չի կարող քննադատվել (տես՝ *mutatis mutandis*, Զուրթն ընդդեմ Թուրքիայի գործով 1998 թվականի մայիսի 25-ի վճիռը, Չեկույցներ 1998-3, էջ 1212, կետ 179): Դատարանը, առաջնորդվելով արդարության սկզբունքով և նկատի ունենալով դիմողի կողմից ներկայացված պահանջների մանրամասները, նրան հատկացրել է 12,000 ֆունտ ստեռլինգ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը, չհաշված 8,045 ֆրանսիական ֆրանկը, որը դիմողն ստացել է որպես իրավաբանական օգնություն Եվրոպայի խորհրդից իր կրած ծախսերի և ծախսերի կապակցությամբ:

Գ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում

128. Դատարանը նպատակահարմար է գտնում ընդունել սույն վճիռը կայացնելու պահին Միացյալ Թագավորությունում կիրառելի՝ օրենքով սահմանված տոկոսադրույքը, այսինքն՝ տարեկան 7.5%-ը:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Մերժում է, ութ ձայնով՝ ընդդեմ մեկի, Կառավարության նախնական առարկությունները,

2. Միաձայն գտնում է, որ չի կարող հաստատված համարվել, որ դիմողը հարձակման է ենթարկվել և նրա հորեղբայրն սպանվել է ի խախտումն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի,

3. Ութ ձայնով ընդդեմ մեկի, գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում՝ այն առումով, որ պատասխանող պետության իշխանությունները սույն դեպքերի առթիվ չեն իրականացրել պատշաճ և արդյունավետ հետաքննություն,

4. Ութ ձայնով ընդդեմ մեկի, գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում,

5. Միաձայն գտնում է, որ անհրաժեշտություն չկա ստուգել, թե արդյոք եղել է Կոնվենցիայի 10-րդ, 14-րդ կամ 18-րդ հոդվածների խախտում,

6. Ութ ձայնով ընդդեմ մեկի, գտնում է, որ՝

ա. պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում դիմողին պետք է վճարի հետևյալ գումարները՝

1) 6,000 (վեց հազար) ֆունտ ստեռլինգ՝ ոչ նյութական վնասի հատուցման համար, որը կփոխանակվի թուրքական լիրայի, վճարման օրը գործող փոխարժեքային կուրսով,

2) 12.000 (տասներկու հազար) ֆունտ ստեռլինգ՝ ծախսերի և ծախքերի համար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը, չհաշված 8,045 (ութ հազար քառասունհինգ) ֆրանսիական ֆրանկը, որը կփոխանակվի ֆունտ ստեռլինգի՝ վճռի կայացման օրը գործող փոխարժեքային կուրսով,

բ. տոկոսները՝ տարեկան 7,5 % տոկոսադրույքով, պետք է վճարվեն վերը նշված եռամսյա ժամկետի լրանալուց հետո՝ մինչև վճարումը կատարելը,

7. Մերժում է միաձայն, պահանջի մնացած մասը, որը վերաբերում է արդարացի բավարարում ստանալուն:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակված է Մարդու իրավունքների պալատում կայացած դռնբաց նիստում, Ստրասբուրգում, 1998 թվականի սեպտեմբերի 2-ին:

Ստորագրություն՝ Հերբերտ Փեթզոլդ

Քարտուղար

Ստորագրություն՝ Ռուդոլֆ Բերնհարդ

Նախագահ

Համաձայն Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Դատարանի A 53-րդ կանոնի 2-րդ կետի, պարոն Գյուլչուբուրի մասնակի չհամընկնող կարծիքը կցվում է սույն վճռին:

**ԴԱՏԱՎՈՐ ԳՅՈՒԶՈՒՔԼՈՒԻ ՄԱՄՆԱԿԻ
ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ**

(Թարգմանություն)

Ափսոսանքով նշում են, որ ես չեն կարող կիսել մեծամասնության կարծիքը հետևյալ կետերի վերաբերյալ:

1. Եղել են դեպքեր, երբ ոչ մերձավոր ազգականները, ինչպես զարմիկները կամ հորեղբորորդիներն են, պահանջել են 25-րդ հոդվածի հիմքով իրենց համարել զոհ և զանգատ են ներկայացրել Հանձնաժողովին, որը գտել է, որ այն համապատասխանում է Կոնվենցիային: Չնայած 25-րդ հոդվածը հնարավորություն է տալիս արյունակցական որոշ կապեր հաշվի առնել՝ որոշելու համար այն հարցը, թե ով է «զոհը», սակայն անհրաժեշտ է հարց բարձրացնել, թե որքանով այդ մոտեցումը կարող է կիրառվել առանց անձնապես զանգատ ներկայացնելու իրավունքը վերափոխելու *actio popularis*-ի: Սույն գործով սպանվածին ավելի հարազատ ոչ ոք (ինչպես նրա կինը կամ երեխաներն են), բացի դիմողից, որն ընդամենը նրա զարմիկն էր, չեն մասնակցել կոնվենցիոն հաստատություններում ընթացող դատավարություններին (տես՝ վճռի 123 կետը): Չպետք է մոռանալ, որ այս բոլոր գործերի հետևում, որոնք միատեսակ են և զալիս են Հարավարևելյան Թուրքիայից, կանգնած են Դիարբեքիի Մարդու իրավունքների ընկերակցությունը և Մարդու իրավունքների քրդական ծրագիրը, որը գտնվում է Լոնդոնում, որոնց մարմինները հետապնդում են քաղաքական նպատակներ՝ տուժողների իրավունքները պաշտպանելու փոխարեն: Իմ կարծիքով, այդ պատճառով է ընդունվել այն, որ դիմողը նույնպես «զոհ» է իր հորեղբոր սպանության գործով, և զանգատում այդ պահանջը նույնպես ընդգրկվել է :

2. Դիմողը նաև սույն գործով չի սպառել ներպետական պաշտպանության միջոցները, որոնք և արդյունավետ են, և ապահովված են Թուրքիայի օրենսդրությամբ: Այս կապակցությամբ, ես իմ չհամընկնող կարծիքում հղում եմ կատարում հետևյալ վճիռներին՝ Աքդամիրը և այլոք ընդդեմ Թուրքիայի գոր-

ծով 1996 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածու 1996-4, Այդինը ընդդեմ Թուրքիայի գործով 1996 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, Չեկույցներ 1997-6, Մենթեշը և այլք ընդդեմ Թուրքիայի գործով 1998 թվականի նոյեմբերի 28-ին կայացած վճիռը, Չեկույցներ 1997-8 և Սելջուկը և Ասքերն ընդդեմ Թուրքիայի գործով 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, Չեկույցներ 1998-2:

3. Բացի դրանից, ինչ վերաբերում է այն եզրակացությանը, որ 2-րդ հոդվածը խախտվել է, քանի որ մահվան հանգամանքների հետ կապված չի իրականացվել բավարար և արդյունավետ քննություն, ապա ես համակարծիք եմ Հանձնաժողովի հետ, որ 13-րդ հոդվածի հիմքով առանձին հարց չի ծագել: Այս կետի վերաբերյալ ես իմ չհամընկնող կարծիքում հղում եմ կատարում Ղալան ընդդեմ Թուրքիայի գործով 1998 թվականի փետրվարի 19-ի վճռին, Չեկույցներ 1998-1, և Զուրթն ընդդեմ Թուրքիայի գործով 1998 թվականի մայիսի 25-ի վճռին, Չեկույցներ 1998-3:

4. Վերջապես, նկատի ունենալով սույն գործի առանձնահատուկ հանգամանքները, ես գտնում եմ, որ դիմողին հատուցված գումարների մեծ մասը չափազանցված է եղել, դա վերաբերում է թե ոչ նյութական վնասի հատուցմանը, թե կրած ծախսերի և ծախքերի հատուցմանը: Իմ կարծիքով, բրիտանացի երեք իրավաբանների համար բացարձակապես անհրաժեշտ չէր և ոչ էլ առանձնապես օգտակար էր մասնակցել այս գործին, քանի որ այն իրենից առանձնակի բարդություն չէր ներկայացնում: